

4759

ԲԻԳ-ԲԻՆ ՎՈՒՅ

Գ Յ Ո Ւ Ղ Ա Յ Ո Ւ ՎՈՂՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Պիես 3 գործողությամբ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏՈՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 6

83

4-79

03 AUG 2005

20 OCT 2009

83

us

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՈՒՅ

4-79

Գ Յ Ո Ւ Ղ Ա Յ Ո Ւ
ՎՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

(Պիես 3 գործողությամբ)

1009
39632

4017

ՓՈՒԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ա. ՏԵՐ-ՀՈՎՆԱՆՑԱՆԻ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1986

2 .08. 2013

4759

Տեև՝ Խմբ՝ Տ՝ Խաչվանձյան
Սրբազրիչ Ոճնիկ Գառաբջյան



Պետերբուրգի տպարան
Գլավլիտ 273, Պատվեր 1012
Հրատ. 3421, Տիրաժ 2000

ԳՅՈՒՂԱՑՈՒ ՎՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

1. ՔՐԻՍՏՈՍԻԱՆ ԲԵՏՑ—միջակ դյուղացի, 50 տարեկան
2. ԱՆՆԱ ԲԵՏՑ— նրա կինը, արդեն ծերացած
3. ՀԱՆՍ ԲԵՏՑ— նրանց վորդին, 27 տարեկան
4. ՇՏՐՈՐԲԵԼ— միջակ դյուղացի, 32 տարեկան
5. ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ— 62 տարեկան
6. ԿՈՏՑ— միջակ դյուղացի, 40 տարեկան
7. ԼԵՆԵ— դյուղացի աղջիկ
8. ՍՈՅԻԱ— Շտրորբելի կինը, 30 տարեկան
9. ԳՅՈՒՂԱՊԵՏ, կուլակ, միջին տարիքի
10. ՌԻԳԳԵՐ— դատական պաշտոնյա
11. ԿԱԼՎԱԾՔԻ ԼԿՈՒՄԼԱՐԵԷ
12. ՔՆՆԻՉ
13. ԲԺԻՇԿ
ՔԱՂԱՔԻ ԲԱՆՎՈՐՆԵՐ, ԳՅՈՒՂԱՅԻՆՆԵՐ,
ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐ.

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Հարավային Գերմանիայում:

Մթնշաղ դաշտերում վերջալույսն է դու-
նստվում: Հեռավոր յեկեղեցու տխուր դան-
դահարովյուն: Մարդիկ վերադառնում են
դաշտային աշխատանքից՝ ծերունի Մյուլլեր-
Փրեյցը, հալածանդամ Շտրորբելը, նրա կինը և
ուրիշները: Նրանք քայլում են ծանր, փո-
շույց դրընացած, նրանք լուռ նստում են
ճանապարհի յեղրին: Մեկը ծխում է, վառ-
ված լուցկին հոգնած և անուշադիր պահե-
լով ձեռքում, մինչեւ մատներին ալրվելը:
Մարդը համայա չի գդում այդ: Մյուսը
ջուր է խմում, խմում է, խմում է անվերջ:
Վոմանը պառկում են ղեռնին:

ՇՏՐՈՐԲԵԼ.— Այժմ ձեզ սպասում է արժա-
նի հատուցում: Դաշտից վերադառնալու
առթիվ ձեզ համար ճոխ սեղան է պատ-
րաստված (հանում է լրագիրը): Հո-

գեղոր ե: Խնդրում եմ վրադ: «Գյուլ-
դական լրագրեր»: Ուշադրութիւն: (Կար-
դում ե): «Բորսա»... Այդպէս... Ձեզ
չստ հարկավոր ե, «Սովը Ռուսաստա-
նում»: Հասկանալի չե... «Գաղանալին
սպանութիւն»... «Տանից հեռացել ե մի
յերեկա»... Գնա, դաւալա դնա... Ա-
հա: «Գյուլդացիութիւնը մեղանում»,—
սա ձեր մասին ե,— ամենից դո՛ւ ե յեր-
ջանիկ դասն ե»: Լո՞ւմ եք: «Իր հողա-
չերտը նրա համար իր վողջ աշխարհն
ե»:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— (Կիսաբարձրանում ե,
ծածկում ե ակնոցները, նայում ե լրագ-
րի եջին) «Իր հողաչերտը նրա համար
իր վողջ աշխարհն ե»: Ճիշտ այդպէս ել
տարված ե:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Լսեցեք, (Կարդում ե). «Թող
դյուղացու վրա դժբախտութիւններ տե-
ղան թող կարելի ճնշի նրան, նա կդի-
մանա: Նա արի չե: Նրա յերակներում
դերմանական մաքուր արյուն ե հոսում»:
Լսիր, դու կդիմանա՞ս ամեն ինչի:

ԼԵՆԵ.— Մա կդիմանա...

ԿՈՏՅ.— Պետք ե աշխատել:

ԼԵՆԵ.— Անասունն ել ե աշխատում: Նա յիւ
դո՛ւ ե, յերբ իրեն լծում են ե մտա-

կով ծեծում:

ԿՈՏՅ.— Լո՛ւր, Լենե:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Դե, բախկան ե սնունդը (դըր-
պանն ե դնում լրագրերը): Կառավարին
ասում ե, վոր ամսի 15-ից աշխատու-
վարձն իջեցնելու չե:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Շուտով հախնորեն ընդ-
հանրապէս չեն վճարի... «Գո՛հ յեղիր,
վոր կենդանի չես»— ահա ինչ են ասում
մայրաքաղաքում:

ՇՏՐՈՒՅԵԼ.— (Բրիչը մի կողմ ե նետում):
Այդ դեպքում թող իրենք փորեն այս
անիծյալ հողը:

ՍՈՖԻԱ.— Ինչո՞ւ յես ավելորդ խոսում,
Սեպպ:

ԿՈՏՅ.— Ուղում ե վանդակն ընկնել:

ՍՈՖԻԱ.— Դեռ լավ ե, վոր աշխատանք կա:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Հապա թող կառավարիչը փոր-
ձի իր քիթը խոթել, յես նրան կրա-
ցատրեմ...

ԼԵՆԵ.— Ո՞ւմ: Կառավարչի՞ն: Տեղդ վե՛ր
ընկիր...

ՇՏՐՈՒՅԵԼ.— Սուս արա, կնիկ: Այստեղ տը-
վեք նրան...

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Այստեղ ավելք այդ քո-
սոտ սատանային ե թող նա պատասխան

տա մեզ... (յերկուսն ել վախեցած ըն-
ունմ են) :

Մոտենում ե մի մարդ :

ՄԱՐԴ.— Բարե :

Լուսթյուն :

ՄԱՐԴ.— Ինչո՞ւ լռեցիք : Զե՞ք ճանաչում :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— Քե՞նչ մարդ ե թրե դա-
լիս...

ՄԱՐԴ.— Յես Բեադն եմ : Հանս Բեադը :
Քրիստիանի վորդին... Հայրս տա՞նն ե :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— (Ուշադիր նայելով, ճա-
նաչում ե համադրուացուն) : Իսկապես,
Հանս Բեադն ե : Վողջույն քեզ քո հայ-
րենիքում, Հանս... : Աչքիս լույսը պո-
կառում ե, այնքան ել յերիտասարդ
չեմ, իսկ դու բոյ ես քաշել :

ՀԱՆՍ.— (Նայելով կանանց) : Այո, հայրիկ,
բոյ եմ քաշել :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— Կրթված մարդու նման
ես դառել, բայց այնքան ել չես ճար-
պոսել, Հանս :

ՀԱՆՍ.— Ուզում եմ այստեղ պարարտանալ :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— (Դառն հեղնանքով) : Ա-
յո, այո... Ողբ մեղանում մարդուր ե
ե թարմ :

ՀԱՆՍ.— Այո, ե՛լ յուզ կա, ե՛լ կաթ կա :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— Իսկ փող կա՞ :

ՀԱՆՍ.— (Ծիծաղում ե) . փողն ինչ եմ ա-
նում, հայրենիքի տերը բախական ե :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— Ահա թե ինչ...

ՀԱՆՍ.— Իսկ ո՞ւր ե հայրս :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— Նա աշխատում ե խա-
ղողի ալդինքում :

ՀԱՆՍ.— Խաղողն ինչպե՞ս ե :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— Զխոսենք այդ մասին...

Սատանան տանի... Մեզ հարկադրում
են քանդել խաղողի վաղերը :

ՀԱՆՍ.— Քանդե՞լ :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— Այո, քանդել : Խաղողը
գլխամբում ե խոնավությանը ե ցըր-
տին : Մեզ հրամայում են քանդել ե
վոջնչացնել առողջ վաղերը միմեյան այն
պատճառով, վորպեսզի կալվածատերն իր
գլխին ալելի թանդ դնով ծախի :

ՀԱՆՍ.— Յեկ դուք հրամանը կատարո՞ւմ
եք :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— Զխոսենք այդ մասին :
Իսկ քաղաքում ի՞նչ կա :

ՀԱՆՍ.— Զխոսենք այդ մասին...

ՇՏՐՈՐԵԼ.— Դու մի վախեցիր, այստեղ ո-
տար մարդ չկա :

ՀԱՆՍ.— Տեսնում եմ... Ողբ ճեղանում մա-
քուր ե... լավ ե :

Լենեն.— Հիմար ես դու տղա: Յեվ դեռ
քաղաքից ես:

ՀԱՆՍ.— Թերեւս հարկավոր ե, վորպեսզի
քաղաքի տղաները վորոշ դեպքերում հի-
մար ձևանան:

Լենեն.— Այ, դա ուրիշ բան ե. թեպետ,
նայած վոր դեպքում... Իսկ առայժմ,
բարե:

ՀԱՆՍ.— Բարե... Լենեն: Կարծեմ այդպես
ե:

Լենեն.— Վոչ թե կարծեմ, այլ՝ Լենեն:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Չեմպիոն աղջիկ ե,
բայց քաղաքում փչացել ե:

Լենեն.— Իսկ դու ստուգե՞լ ես:

Գյուղացիները ծիծաղում են:
ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Տես, կստուգեմ.

Լենեն.— Պապի, ավելի լավ ե հանձնարարիք
ուրիշի (աչքով ե անում Հանսին) հը՞:

Գյուղացիները ծիծաղում են:

ԿՈՏՑ.— Յես կարող եմ գիշերը ստուգել:

Լենեն.— Դո՞ւ...

ՄԻ ԳՅՈՒՂԱՑԻ.— Սո՞ւ... կառավարիչը:

ԿԱՌԱՎԱՐԻՉ.— (Մոտենում ե, գյուղա-
պետի հետ խոսելով): Դուք պետք ե
մտահոգվելիք նախ ե առաջ այն մա-
սին, վորպեսզի բոլոր պարտքերը վը-
ճարված լինեյին... (ստուգելով ծոցա-

տետրում). Ահա, որինակ, ձեղանում
ինչ վոր մի բեռաց կա...

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ծիշտ այդպես:

ԿԱՌԱՎԱՐԻՉ.— Դեռես անցյալ տարվանից
նա պարտք ե մնացել կապալաւարձից
հարյուր հիսուն... Յես կարգադրեցի
ցուցակադրել նրա կայքը:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Լսում եմ... Իսկ ընդհան-
րապես այդ բեռաց բարեխիղճ մարդ ե:

ԿԱՌԱՎԱՐԻՉ.— Գուցե: Սակայն մենք բա-
րեգործական ընկերություն չենք: (Նկա-
տելով Հանսին): Այս մարդն ո՞վ ե:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— (Հանսին) Դո՞ւ... Ա՛, Հանս
...Սա Հանսն ե, այդ բեռացի վորդին:

ԿԱՌԱՎԱՐԻՉ.— Ա՛... Այդպես, յես ստու՞թ
եմ, վոր մենք բարեգործական ընկերու-
թյուն չենք: Հասկանալի՞ յե: Յեթե մար-
դիկ դադարեն վճարել իրենց պարտքերը
ե հարկերը, մեր կալվածքը կցամաքի ե
այն ժամանակ մենք հարկադրված կլի-
նենք բոլորին արձակել:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Լսում եմ: Քրիստիանն Բեռ-
ցի մատին գործ կախվի, յեթե դուք
պնդում եք, պարոն կառավարիչ:

ԿԱՌԱՎԱՐԻՉ.— «Պնդում եք», «պնդում եք»
...Պնդում ե որեքը: (Նկատելով գյուղ-
ապետի թաղցրած խաղողի վագերը):

Հիացե՛ք, պարոն դժուրապետ: Նախկին
անկարգութիւնը... Սա ի՞նչ բան է,
հարցնում եմ:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Խաղողի վաղեր:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Դուք դեռե՛ք, վոր կառա-
վարութիւնը արդեւում է վաղեր տնկե-
լը:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Յերեսուն հազար դժուրապետ
տնկում է:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Այդ վաղերը դեմանում
են ցրտին և խոնավութեան:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Հիմարութիւն է: Ապացուց-
ված է, վոր նրանք վարակված են Փի-
լոքսերայով:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Ինչո՞վ:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Խաղողի վոջիւով:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Յես դեռ յերբեք նրանց
վրա վոջիլ չեմ տեսել: Վոջիլը բոլորո՞-
վին ուրիշ տեղ է լինում:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Լեզուք քեզ քաշիր, ծերո՛ւկ:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Բաւական է: Խաղողի վա-
ղերը վոջնացնել (վերցնում է գամբու-
ղի միջից վաղերը և կոտրատում):

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Թո՛ղ: Ձեռքերդ հե-
ռո՛ւ...

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Խեղդ թոցերէ կ'ո, ծերուկ:

ՇՏՐՈՒՅԵԼ.— (Կանգնում է կառավարչի դեմ

հանդիման). Խաղողը մեր հացն է...

հասկացե՛ք...

ՍՈՖԻԱ.— (Յետ և հըում նրան) Հանդատա-
ցիր, Սիւլա:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Հեռու, կնի՛կ...

ԼԵՆԵ.— (Վաղերը նետելով կառավարչին).

Ա՛ռ, կոկորդէ խցկիր մեր խաղողը:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Ո՞վ է սա... գրեցե՛ք...
դժուրապետ, այս ինչե՞ր են կատարվում
ծեղանում:

ՍՈՖԻԱ.— (Լենեյին ցույց տալով). Պարոն
կառավարիչ, նա մեզանից չէ, նա քաղա-
քից է:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Բոլոր դերմանացիները նման
պետք է լինեն: Բացատրեցե՛ք այդ բանը
նրան: Գյուղապետ խաղողի վաղերը
պետք է վոջնացնել: Բետցի կայքը պետք
է վերգրել: Յեւլ այդ բոլորը պետք է
կատարվի գրոհայինների հսկողութեամբ:
Մեր գյուղացիները պետք է հասկանան
այդ և պետք է կատարեն... (նայում է
գյուղացիներին):

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— (Նայելով իր համագյուղա-
ցիներին) Ճիշտ այդպես... Սակայն, պա-
րոն կառավարիչը պետք է համոզված
լինի, վոր Քրիստիան Բետցն աղնիվ
մարդ է: Գուցէ, այնուամենայնիվ, խո-

սեյիք նրա հետ, մի կերպ համաձայնութեան դայիք... Գուցե կարելի լինե՞ր ողնել նրան...

ԿԱՌԱՎԱՐԻՉ.— Այո, մենք պետք է ոչ նենք միմյանց... Կիսոսենք այդ մասին... Գնանք (գնում է)։

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— (Գյուղացիներին) Տեսա՞ք... (գնում է կառավարչի յետևից)։

ԿՈՏՅ.— Անպայման կողմեն։

ՇՏՐՈՒՅԵԼ.— (Նայում է կոտորատված վաղերին) Այդպես, այդպես... «Գյուղացիու թյունը մեզանում ամենից դուհ է յերջա նիկ դասն է»... Ինչո՞ւ մարդիկ հավատացին Հիտլերին։

ՍՈՖԻԱ.— (Սարսափահար) Սոս'...

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— (Հանսին) Տեսա՞ր, Հանս, թարմ ողը է... Կայծա՛կը պետք է հարվածի այս շան կյանքը, կայծա՛կը պետք է այրի այս ցնցոտին... Լսեցե՞ք ինչ է ասում ձեզ ծերունկ Մյուլլերֆրիցը...

Գյուղացիները սարսափահար լուռ են։ Վոմանը շտապ հեռանում են։

ՀԱՆՍ.— (Լենեյին) Վաղո՞ւց ձեզանում այսպես է։

ԼԵՆԵ.— Իսկ ձեզանո՞ւմ։

ՀԱՆՍ.— Ի՞նչ եք շարունակ լուռ է և չորս կողմը նայում։

ԼԵՆԵ.— Իսկ դու վո՞րտեղից ես դալիս։
ՀԱՆՍ.— (Լենեյին) Առաջի արդեն։ Իսկ դու ուրեմն յեղե՞լ ես քաղաքում։

ԼԵՆԵ.— Այո։

ՀԱՆՍ.— Վո՞րտեղ ես աշխատել։

ԼԵՆԵ.— Մանածագործարանում։ Իսկ դու՞։

ՀԱՆՍ.— Փականագործ։

ԼԵՆԵ.— Կարմիր ես։

ՀԱՆՍ.— Յես գերմանացի յեմ։ Իսկ դո՞ւ։

ԼԵՆԵ.— (Կիսակատակով, փորձող) Յես դերմանուհի յեմ։ Յերկա՞ր Ժամանակով ես յեկել։

ՀԱՆՍ.— Չգիտեմ։

ԼԵՆԵ.— Լավ կլինե՞ր, յեթե մնայի՞ր։

Լուռ թյուն։

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Չգուշացիր, Հանս, թե չե՛ նա կամուսնանա քեզ հետ։

ԼԵՆԵ.— Մուս արա դու, ծերո՛ւկ։

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Դե, հանգստացա՞ք։ Դը նանք։

ՇՏՐՈՒՅԵԼ.— Գնանք։

ՀԱՆՍ.— Յտեսու՞թյուն, Մյուլլերֆրից։

ԼԵՆԵ.— Յես մի փոքր կմնամ։

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Ըն՛ը... Արդե՞ն... (նա յելով Հանսին) Շատ չուտ է կատարվում դա ձեր մեջ։ Դե, գնացի՛նք։ Ի՞նչ։ Այս էլ քեզ ուրիշին հանձնարարել։ (Գը...

նում են: Դաշտից մանր քայլերով դա-
լին և Բրիտանիան Բեռլինը: Յետեկից՝ նրա
կենը Աննան:

ՀԱՆՍ.— (Վեր և կենում, հանում և դըւ-
խարկը) Բարե, հայրեկ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Չոր) Բարե: Ինչո՞ւ յեռ յե-
կել:

ՀԱՆՍ.— Արձակեցին: Յես քսանհինգ տա-
րեկանից փոքր եմ: Բարե, մայրեկ:

ԱՆՆԱ.— Հա՛նս:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Խիստ) Գնա՛նք, Աննա. . .

Քրիստիանը և Աննան մուտք գնում
են դեպի տուն: Հանսը մնում և մը-
տախոհ:

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Քրիստիան Բեռլին տունը:

Հին, սևացած, փայտյա պատեր: Փոքրիկ
լուսամուտներ՝ յերկաթյա ամուր ձողերով,
խաչելության սրբապատկեր: Քրիստիան Բեռ-
լին սուրը և զինվորական լուսանկարը պա-
սից կախված: Կոպիտ ամանեղեն:

ԱՆՆԱ.— (Հաշվելով) Հինգ անգամ վեց՝ յե-
րեսուն... խանութին ել յոթը... Քրիս-
տիան, խանութում ստացին, վոր մեր,

ջին անգամ են ապառիկ տալիս,— այլևս
վերջացավ:

Քրիստիանն ինքը լուռ հաշվում և
համբուխ վրա:

ԱՆՆԱ.— Լսո՞ւմ ես:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Առանց գլուխը բարձրացնե-
լու) Սո՛ւս կաց:

Լուռ թյուն:

ԱՆՆԱ.— Քրիստիան, ինչո՞ւ մարդիկ կար-
ծես անիծված լինեն... Քրիստիան, լը-
սո՞ւմ ես... ինչե՞ր և կատարվում աչ-
խարհում: Քաղաքից նորից յեկել եր
մեկը...

ՔՐԻՍՏԻԱՆ.— Սո՛ւս կաց, Աննա: «Քաղա-
քից»... Ի՞նչ են հասկանում քաղաքի
մարդիկ: Նրանք իրենց համար կենսա-
թոշակ են ստանում ու պարապ ման դա-
լիս և կամ պաշտոնական համազգեստ են
հագնում և ձեռքերը դրվանները դը-
րած, թրև դալիս... Դատարկապարտ-
նե՛ր... (ձեռքի ափով խփելով թղթե-
րին) Ահա թող նրանցից մեկն ու մեկը
գլուխ հանի այս բոլոր հարկերից ու
տուրքերից: (Գրում և) Հասարակական
հարկ՝ 98, հողային տուրք՝ 25, յեկե-
ղեցական հարկ՝ 22, դրավ դրված հողի
տուրքեր՝ 320, փայտվարձ՝ 150:

1009
39632
6007
407



ԱՆՆԱ.— Գուցե վարկ տան:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Բանկն այլևս վնջինչ չի տալիս:

ԱՆՆԱ.— Իրերն են ծախում... Եռլայնիկ հարևանի կարի մեքենան վերցրին: Ամեն ինչ, մինչև վերջին թեղը: (Դառնացած) Իսկ մենք ձայն տվեցինք նրանց:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Սղոսավի սրես մի կըսկըռտ, կնի... Յես ախշատում եմ... Յես կարգարացնեմ... ինձ ժամանակ կտան: Կառավարիչը կպաշտպանի ինձ:

Մտնում ե հանսը: Անվճարկան կանդ ե առնում դուս մոտ:

ԱՆՆԱ.— Նստի՛ր, ընթերի՛ր:

Մայրը ամառը՝ մի քանի կարտոֆիլով՝ դնում ե սեղանի վրա:

ՀԱՆՍ.— Սրիկանե՛ր:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ո՞ւմ ես ասում:

ՀԱՆՍ.— Նրանց, բոլոր նրանց:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Քո դանդառներից դուրսի՞ր... նը չի փոխվի:

ՀԱՆՍ.— Ռեզերը յեկել ե քո տան իրերը վերգրելու:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Հացի կտորը վայր ե ընկնում ձեռքից) Ի՞մ: Յես... (Ձորո կողմն ե նայում, նստում ե... Դադար) Նշա՞

նակում ե, սեղեք ե ավելի շատ աշխատե՛լ: Յես գիշերները նույնպես կաշխա՞տեմ, գիշերները... Իսկ դու, Աննա՛...

ԱՆՆԱ.— Լավ, Քրիստիան:

Լռություն:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ինչո՞ւմ ե գաղտնիքը: Ի՞նչ ե կատարվում:

ՀԱՆՍ.— Այն, ինչ ասացի, հայր. (մորը) Մի քիչ կաթ տայիր, մայր...

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ի՞նչ ես ուզում ասել:

ՀԱՆՍ.— Մի բան լավ ե այստեղ համեմայն դեպս—ողը մաքուր ե:

ԱՆՆԱ.— Կա՞թ... ինչ ես ասում, մենք մինչև վերջին կաթիլը հանձնում ենք:

ՀԱՆՍ.— Այդպես...

ՔՐԻՍՏԻԱՆ.— Մենք վարժվել ենք: Խրամատ ներումն ել այդպես եր:

ՀԱՆՍ.— Հայր, դու վորոշել ես քո ամբողջ կյանքում ապրել այնպես, ինչպես խրամատներո՞ւմ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ինչ արած, իմ բախտն այդպես ե:

ՀԱՆՍ.— Ձե՞ վոր դու պատերազմի վետե՞րան ես, կենսաթոշակն ի՞նչ ես արել:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Տվել եմ հարկերի դիմաց:

ՀԱՆՍ.— Յեկ շարունակ լո՞ւտ եք:

ԱՆՆԱ.— Տեղեր կան, վոր լուռ չեն: Հարե՞

վան դյուղում նույնպես տկայելն վեր-
գեր կազմել... Հարձակվեցին նրանց
վրա, ավազ լցրին աչքերին, յերեք հո-
գու կողերը ջարդեցին:
ՔՐԻՍՏԻԱՆ.— Գիշ դուքս տուր, Աննա:
«Ջարդեցի՞ն»... Դրանով վռչինչ դուրս
չի գա... հացը չի ավելանա: Կոմի
ապրողը մուրացկանի տոպրակին կտե-
րանա:

ՀԱՆՍ.— Հայր, ըս կարծիքով կռվե՞ր և նը-
շանակում, յերբ դյուղային իր իրա-
վունքներն ե պաշտպանում:
Քրիստիան լուռ ե:

ԱՆՆԱ.— Անցյալ անդամ հարևանի յեղը
տարան... Ժողովուրդը հալաբլեց, մա-
նապարհին խարույկ վառեցին... Յեղը
վախեցավ, ձեռքերից աղատվեց և փա-
խավ իր տիրոջ մոտ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Հուզված) Իսկ յես ասում
եմ, վոր արդարևով փորձանք կբերենք
մեր գլխին: Այդ Ռեդերը զենք ունի
մոտը:

ԱՆՆԱ.— Այո, այո, նա մի քանի անգամ ա-
տրճանակը քաշել ե հարևանի վրա:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Հասկա ի՞նչ պիտի անի: Ռ-
բենք ե:

ԱՆՆԱ.— Այո՛... Իսկ ի՞նչ կասես, յեթե նա

մեր իրերը գրե՛ն:

Քրիստիանը լուռ ե:

ՀԱՆՍ.— Ինչքա՞ն ես պարտ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Հարկ՝ մոտ հաբյուր, կապա
լավաճ՝ հաբյուր հիտուն:

ՀԱՆՍ.— Թեքեա կարելի յե մի բան ծախել:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ամեն ինչ արդեն ծախել ենք...

(Դիտում ե սենյակը) մնացել ե ահա-
միայն սա... Հիշատակ (ցույց ե տալիս
որորոցը). սրա մեջ պապս, հայրս, յես
և դու պառկել ենք ծննդյան որից...
պահում եմ հիշատակ... հողա ծախեցի...
նույն այդ հողը կապալով եմ վերցնում:

ՀԱՆՍ.— Դա արդեն... (զարթուրթից չի շա-
բունակում):

ԱՆՆԱ.— Յեվ ինչու հողի համար պետք ե
շարունակ վճարենք ու վճարենք... Ամ-
բողջ կյանքներս այդ հողի մեջ ենք դը-
րել:

ՀԱՆՍ.— Քեզ նմանները պետք ե լավ միտք
անեն, թե ի՞նչպես յեղավ և ի՞նչ դուրս
յեկավ:

ԱՆՆԱ.— Հետո ի՞նչ:

ՀԱՆՍ.— Պահանջել, վորպեսզի կապալադիրն
կրող չափ իջեցվի:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ե՛ր, գլուխ... «Պահանջե՛ր»:

ԱՆՆԱ.— Հապա ի՞նչ: Յեթե հարեանները
խոսքը մեկ անհն:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Անա, կրկի՞ն:

ՀԱՆՍ.— Յեթե միանգամից սկսեն խոսել
հինգ հարյուր հազար հոգի...

ՔՐԻՍՏԻԱՆ.— Մորդ խելքահան մի արա,
հանա (կանգնում ե նրա դիմաց): Յես
թույլ չեմ տա: Մի՛ հիմարացրու ինձ քա-
ղաքի դանադան ոյիններով: Մենք տե-
տանք, թե ուր հասցրին դրանք:
Գյուղի կյանքն ուրիշ է: Յես աշխա-
տում եմ, իսկ ում դուր չի դալիս դա...
(ներս ե դալիս լինեն):

ԼԵՆԵ.— Քրիստիան, դյուղապետը ե կառա-
վարիչը դալիս են այստեղ:

ԱՆՆԱ.— Ահա... (նետվում ե ներսի սենյա-
կը):

ՔՐԻՍՏԻԱՆ.— Յե՛տ դարձիր: Հանդիստ, Ան-
նա: (Դիտում ե սենյակի խղճով լրերը)
նրանք իրավունք չունեն խլելու... Դուք
ի՞նչ եք կարծում:

Մտնում են դյուղապետը ե կառավարի
չը:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ահա, պարոն կառավարիչ,
բրիտանյան Բեստը:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Հայլ Հիտլեր:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (կամացով) Հայլ Հիտլեր:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Դե, բարեկամս, ինչքան ես
պարտք մնացել:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Հենց հիմա դա էլի հաշվում,
պարոն կառավարիչ, ընդամենը հարյուր
հիսուն այս տարի: (Քաշում ե սեղանի
արկղը) Ահա ութ մարկ մնացել ե... Կեն
սաթողակից... դուցե կվերցնեք:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Թերևս դուք ավելորդ էրեք
ունեք (դիտում ե սենյակը):

ԱՆՆԱ.— Բայց դա...

ՔՐԻՍՏԻԱՆ.— Հանգիստ, Աննա:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Իսկ հո՞ղ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Հոգն ամբողջովին ձեզ ե ան-
ցել:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Հավանական ե, հավանական
ե, բարեկամս: Ի՞նչ արած, դուք կար-
ծում եք մենք պարտքերի տակ ճնշված
չե՞նք: Ո՛ր, այն ել ինչպես... Այո...
Բոլորը ճնշված են պարտքերի տակ...
Ժանը Ժամանակներ են:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ծանր տարիներ են:

ՀԱՆՍ.— Ծանր տարիներ են նախած ում հա-
մար: Սակայն դուք դուցե մի կերպ կող
նեյիք սրանց (ցույց ե տալիս հորը ե
մորը): Ձե՛ք վոր սրանք այս դրուժյան
են հասել չնորհիվ տիրող պայմանների:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Խոսքեր են, նենգամիտ խոս-

ՔՐԻՍՏԻԱՆ.— Թո՛ղ, Հանս:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Այժմ ինձ համար շատ բան հասկանալի չէ: Գյուղապետ, ինչու յեն քաղաքից մեզ մոտ դալիտ սրա նման ուր ոտախոտները: Ի՞նչ է, քեզ դուրս են շարժել դերհային ջոկատներից, թե՞ դու... (ուշադիր նայում է):

ՀԱՆՍ.— Յես, յես եմ... ասում եմ այն, ինչ կա: Հիշո՞ւմ եք, դուք կոչ ելիք ա- նում՝ դերմանցիներ՝ քահանջեցեք ձեր իրավունքը: Այժմ չե՞՞ կարելի: Նույնիսկ տուն դալ ծնողներին մոտ չե՞՞ կարելի: Այդ դեպքում պարիսպներ կանգնեցրեք դյուղերի շուրջը, խրամներ փորեցե՛ք, իսկ մարդկանց արգելեցե՛ք մտածել և խոսել:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Հիմարություններ դուրս փա- տուր, Հանս:

ԼԵՆԵ.— Առանց այն ել մարդիկ մեղանում չեն խոսում, այլ բառաչում են միա- վանկ...

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Ջալբացած, Հանսին և Լենե- յին) Ձայներդ կտրեցե՛ք, ասում եմ ձեզ: Դուք իմ տանն եք և վոչ թե քաղա- քում՝ ժողովի, հեռացե՛ք այստեղից: Յես թույլ չեմ տա իմ ներկայութամբ

քեզ են դրանք, սիրելի՛ս: Այդ դեմագո- գիան քաղաքում թերեւ կարող է դրավել վոմանց, բայց դուք ախտեղ, դյուղե- րում, հաջողություն չե՛ք ունենա:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Հաստատելով) մենք պարզ մարդիկ ենք: (Հանսին) Դու լուռ մնա: (Կռաւարձին) ներեցե՛ք նրան, անհաս- կացող աղա յե:

ՀԱՆՍ.— Հայր, ի՞նչու անհասկացող, մեզ արդեն շատ բան են սովորեցրել... մենք ինքներս ել վորոչ բան սովորել ենք... Քաղաքներում ել աեսել ենք... (կռաւ- վարիչին) Թեկուղ մեկ անգամ նայեցե՛ք սրանց... Դուք խոսում եք դերմանական վոգու մասին... Իսկ ո՞ւր է հողը: Ո՞ւր է «հողի հարապատ շերտը», վորի մասին գրում եք գուք... Այդպես եք գրում «Գյուղական լրաբեր» թերթում... Ո՞ւր է իմ հոր հողը... Ո՞ւր է այն հողը, վորը պատկանում էր դեռևս մեր սրալե- րին:

ԼԵՆԵ.— (դռան մոտ կանգնած) Նա նույն- իսկ կարգին չգիտե՛՞ վո՛րաքեղ ե դոնվում ադ հողը:

ԿԱՌԱՎԱՐԻԶ.— Դե, ուրիշ ի՞նչ կասե՛ք:

ՀԱՆՍ.— Ուրիշ ի՞նչ: Դուք խլում եք վեր- ջինը:

այդպէս խոսել: (Վրա յե դնում դեպի վորդին) դո՛ւրս այստեղից, ասացի:

ԱՆՆԱ.— Քրիստիան: Դո՛ւրս: (Կնոջը մի կողմ հրելով)

ՀԱՆՍ.— (Կանգնելով նրան դեմ հանդիման) Ինքը կեանքս մեզ, հայր:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Դո՛ւրս այստեղից:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ա՛յ, տեսնում եք, պարոն կառավարիչ, Քրիստիան Բետցը իսկական գերմանացի յե, հեշտ չե նրան ճանապարհից չեղել:

ԿԱՌԱՎԱՐԻՉ.— Ա՛յդ եր պակաս: Ելեցեք մարդուց նրա հավատը, հիմունքները և նա տեղեկի նման կթուչի քամու բերանն ընկած: (Դադար: Բետցին) Դուք վոչ վո քից վարի ստանալ չե՞ք կարող:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Բանկն ալիս չի տալիս:

ԿԱՌԱՎԱՐԻՉ.— Գուցե այսպէս անկեք,— ձեք բարեկամները, հարեւանները չե՞ն կարող յերաշխափորել:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Մենք արդեն քսան հոգու հա մար յերաշխափորել ենք...

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Վեր ե կենում: Աննան կանգնում ե նրա կողքին): Պարոն կառավարիչ, թույլ տվեք ինձ աշխատել և կամաց-կամաց հասողեցել պարտքը: Թույլ

տվեք ինձ աշխատել կալվածքում: Վոր տեղ կամենաք, ութը, տասը, տասներկու ժամ, դիշերները նմանապես... Կինո նույնպէս կաշխատի:

ԿԱՌԱՎԱՐԻՉ.— Վճարելու փոխարեն աշխատե՞լ: Այդ դեպքում բոլորը վճարելու փոխարեն կսկսեին «աշխատել»: (Դադար. դուռը պակաս) Մեղանում բնական տնտեսություն չե: (Բետցին) Վերջ է՝ վերջո դուք քչից-չատից իրեք կունենաք... Հարկադրված ենք ծախել... ինչ կենտարբ...

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Հուզված) Վոչ, միայն վոչ այդ... Ձե՞ վոր դա վերջինն ե: Յեթի դա ել դնա, հետո տունը, իսկ հետո ել... մեզ անկեանոց... (Հուսահատ) պարոն կառավարիչ, ի սեր ասածո, մի խեղ (ցույց ե տալիս իր ունեցած ինչ վենտարբ—բրիչներ): Ձե՞ վոր սրանցով աշխատում եմ ձեզ համար... մի խեղ վերջինը, պարոն կառավարիչ... (ցույց տալով որդուցը) իսկ սա հիշատակ ե: Գոնե դու հասկացիր, դուռը պետ... ողնեցե՛ք:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— (Կամացուկ, կառավարիչին) Գուցե, պարոն կառավարիչ, դուք այ-

նուճաճեանցնիս կՀամաճայնիցիք նրան
ժամանակ տալ:

ԿԱՌԱՎԱՐԻՉ.— «Ժամանակ», «ժամանակ»..
Յերեսուն դրուղացի պարտքերը չեն վը-
ճարում, իսկ ո՞վ պիտի վճարի, յե՞ս
պիտի վճարեմ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Խնայեցե՛ք... մարդե՛կ...
պարոն կառավարիչ:

ԿԱՌԱՎԱՐԻՉ.— Դուք պարտ եք արել, ծե-
րուկ, հարկավոր ե պարտը վճարել,
այդպես ե կյանքը (դուրս ե գնում):

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Համբերություն, բետոյ, համ
բերություն: (Դուրս ե գնում կառավար
չի յերակից):

ԱՆՆԱ.— Քրիստիան:

Քրիստիանը լուռ ե:

ԱՆՆԱ.— Իրերը թաղցնե՞մ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Պետք չե: Ձի՛ կարելի:

ԱՆՆԱ.— Գուցե Հանսին կանչեմ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Թող ինձ հանդիստ քո Հան-
սով:

Գնում ե ներքին սենյակը, մուտքի դու-
ռը բացվում ե, մտնում են դրուղացի-
ները:

ԿՈՏՅ.— (կամացուկ) Անցա՞մ:

ԱՆՆԱ.— (բարացած նստել ե) Աստվա՛ծ
իմ, աստվա՛ծ իմ:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— (մտտենալով Աննային)

Քրիստիանն ո՞ւր ե, Աննա՛:

ԱՆՆԱ.— Ձրխոճ ուր գնաց:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Գուցե նա ուղում ե անտառ
գնալ:

ԱՆՆԱ.— Վոչ:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Ռիդերը յեկել ե, ան-
պայամն վորձանք ե պատահելու:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Այսոր առավոտյան նրան տե-
սել են...

ԿՈՏՅ.— Նա յեկել ե Քրիստիանի հոգու յե-
տեվից:

ԼԵՆԵ.— Մարդի՛կ, հարկավոր ե ոգնել...

Ներս ե դալիս Քրիստիանը: Տեսնելով
յեկածներին, կանգ ե առնում...

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ինչո՞ւ յեք հավաքվել:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Քրիստիան... բանն այս-
պես ե...

ՇՏՐՈՒՅԵԼ.— Նստի՛ր, Քրիստիան:

Քրիստիանը կանգնած ե:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Այդ վորսկան շունք, Ռիդերը
մեր դրուղումն ե: Այսոր առավոտյան

նա սկսել ե վերդիլ կազմել:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Իմ ի՞նչ գործն ե:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Դա կարծես քեզ ել ե
վերաբերում:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Յես վոչ վոքի վնաս չեմ

տվեւ... Յես կաշխատեմ պարտքի փոխարեն...

ՇՏՐՈՐԵԼ.— Վերջին չաբաթ Ռիզզերը յերեք ընտանիք փողոց ե նետել:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Դե բավական է: Յես հին զինվոր եմ, վետերան եմ և արժանի չեմ դրան:

ԼԵՆԵ.— (Տրտում) Քրիստիան, Քրիստիան:

ՇՏՐՈՐԵԼ.— Անհրաժեշտ ե, վորպեսդի Ռիզզերը հեռանա այստեղեց:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Ամբողջ դյուղը կհավաքենք:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ի՞նչ եք ուզում անել,— խը. ռովությո՞ւն, անկարգությո՞ւն:

ՇՏՐՈՐԵԼ.— Ուզում ենք քեզ ողնել:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Ձղախնայած) Ինձ այդպեսի ողնություն հարկավոր չէ, յես վոչինչ հակառորինական բան չեմ արել: Յես չորս տարի յեղել եմ պատերազմում: Յես իմ արյունն եմ զոհել... Յես աղնը վորեն իմ քվին տվել եմ առաջնորդին... նրանք չեն խլի հաշմանդամի վերջին իրերը:

— Դա արգելված է,— այդ մասին տպված է այստեղ, այս դրբում, «Ինչպես պետք է դյուղացին պաշտպանի իրեն» դրբում: Այս գիրքը տվել են ինձ,

յերբ Ադուլֆ Հիտլերը իշխանության գլխաւ անցավ (բաց ե անում գիրքը)՝ Ահա այստեղ, քաղաքացիական որենադրության Յորդ կեսի չորս հարյուր տասերկու հատվածում ասված է՝ «Վերջին յենթակա չե դյուղական տնտեսության համար անհրաժեշտ ինվենտարը»... Դուք բարեք եք ցանկանում ինձ, դուք բոլորդ,— շնորհակալ եմ, Շարոն, Մյուլլերֆրից, շնորհակալ եմ, Շարոն, և դու Լենե... շնորհակալ եմ... բայց հասկացեք, յես ուզում եմ հանգիստ և խաղաղ ապրել իմ տանը:

ՇՏՐՈՐԵԼ.— Մենք ուզում եյինք քեզ ողնել:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ամեն մարդ ամենից լավ ինքն ե իրեն ողնում:

Բոլորը հեռանում են շփոթված, հրաժեշտ տալով տանտերերին: Քրիստիանը կրկին հանում է այն տետրակը, ուր դրոնը եմ հարկերի անդորրագրերը և կապալառվածը վճարելու կոնագիրը: Նստում և սկսում է նորից հաշիվել:

ԱՆՆԱ.— Կապալառված՝ հարյուր հիսուն...

մեկ ամսից կիրկնաստակվի:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Դուրս մի տուր, Աննա:

ԱՆՆԱ.— (Մտնելով) Ե նրան տրտում և փա

շաքչալան) Գրիստիա՛ն, դու ինձ չա-
րունակ լուեցնում ես: Ինչո՞ւ, ինձ հա-
մար նույնպես ծանր ե: Մեջքս ցավում
է, թեւիւրս...

ՔՐԻՍՏԻԱՆ.— Գրկում ե կնոջը (ներիւ
ինձ, պառա՛վ...ծանր ե ինձ համար...

Աննան լաց ե լինում: Մտնում ե Հան
սը: Նա ծանր հեռում է: Վաղ ե տվել:

ՀԱՆՍ.— Հա՛յր, Ռեդգերն արդեն գյուղումն
է: Նա դալիս ե այստեղ: Հայր, ձա՛ն
տա՞ժ Ժողովուրդը հավաքվի:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Հարկավոր չէ: Յես ինքս ինձ
կողոնեմ: Շապիկս վրայիցս չեն հանե-
լու... (դիրքը ձեռքում բռնած) Այստեղ
զբվա՞ծ ե, թե վոչ:

ՀԱՆՍ.— (կարդում ե) «Ինչպես պետք ե
գյուղացին պաշտպանի իրեն»: Հետա-
քըքիւր ե ինչպես:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ինչպե՞ս: Արդարությամբ:
Որենքով:

ՀԱՆՍ.— Տարբեր արդարություններ ե տար
բեր որենքներ կան, հա՛յր:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Ուխտ) Արդարությունն՝ ար
դարությունն է: Որենքն՝ որենք է: Ահա
այստեղ, սևով սպիտակի վրա զբված է՝
«Համաձայն քաղաքացիական որենադրու-
թյան 3-րդ կետի 412 հատվածի, յեն-

թակա չե վերգրման գյուղատնտեսու-
թյան համար անհրաժեշտ ինվենտա-

րը... Ահա՛ արդարությունը:

ՀԱՆՍ.— Ինչպես կուզես... Տեսնենք...

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Մասամբ անձնատուր լինե-
լով) Իսկ ո՞վ կարող ե ողնել: Յեթե
դատական պաշտոնյան դա, ի՞նչ կարող
եմ անել յես: Իսկ յեթե տերը կամե-
նա, վորպեսզի այլ կերպ լինի, ուստ
թող հնչե նրա ձայնը: (Դառնում ե խա
չելության կողմը):

ՀԱՆՍ.— Ե՛հ, հաղիվ թե նրա ձայնը հըն-
չի (դեպի վեր) ե՛յ... դու, հնչիր...
դե:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ահա թե դու ով ես: Դու
նրա՞ն ել ես պարստվում (վրա յե դը-
նում, պատրաստ սպանելու վորդուն):

ԱՆՆԱ.— Ձե՞ր վոր Հանսն ուզում ե քեզ ոգ-
նել, Գրիստիա՛ն:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Դու՛քս այստեղից (դուրս ե
անում վորդուն և կնոջը): Մայրը և վոր
դին վախեցած դուրս են փախչում: Ծե-
րուկ գյուղացին ընկնում ե նստարանի
վրա:

Հայացքը հառած աղատարար դրքին,
կարդում ե կիսաձայն՝ «Համաձայն քա-
ղաքացիական որենադրության 3-րդ կե-

տի 412-րդ հատվածի, յենթակա չի
վերգրման»...:

ԱՆՆԱ.— (Վախեցած ներս և նայում) Նա
այտեղ և, Գրիտիա՛ն, նա պահան-
ջում և մառանի բանալին...

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Աշխատելով հանդիստ յերե-
վալ): Յես այտեղ իմ տանն եմ:

ԱՆՆԱ.— Հանդիստ պահիր քեզ, Գրիտիա՛ն:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Վառքի յե յենում): Յես
հանդիստ եմ:

ԱՆՆԱ.— Բանալին տուր իրեն: Ասում են
նա զենք ունի: Բանալին իրեն տուր,
Գրիտիա՛ն:

Գրիտիանը բանալին սեղմում և բը-
ռան մեջ:

ԱՆՆԱ.— Հանալին հանչե՞մ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Սպասիր:

Մտնում և դատարան կատարածուն:

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱԾ.— Հայլ Հիւրեր: Դո՞ւք
եք Գրիտիան Բեռցը:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Յես եմ, ձերդ ազնվութուն:

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱԾ.— Կապալավարձը չվճարե-
լու պատճառով կայքը ցուցակագրվելու
հրամանի հիման վրա, յիս պահանջում
եմ ցույց տալ ձեր իրերը:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ինչպե՞ս եմ կարելի խելի,

պարոն դատարան կատարածու: Այդպես
և որենքը:

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱԾ.— Դուք համաձայն եք
յենթարկվելու: Դյուղապետի մոտ յեր-
կու դրոհային կա:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Դրոհայինները նույնպես չեն
կարող ընթանալ հակառակ որենքի, պա-
րոն դատարան կատարածու (վերցնում և
դիքը): Ահա:

ԱՆՆԱ.— (Նետում և դեպի նա) Ի սեր
ասածո, Գրիտիա՛ն, բանալին իրեն
տուր: Յես ինքս հիմա ամեն ինչ կը-
հանձնեմ իրեն:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Յե՛տ: Ամեն ինչ պարզ և ցե-
րեկվա նման: Թող պարոն դատարան
կատարածուն ինքը կարդա, նա պետք
և կարդա:

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱԾ.— Դուք ուղում եք ինձ
սովորեցնել:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Այս դրքում ամեն ինչ շար-
ված և, այս դրքում, վորը ինձ ավել
են տուգնորդի համատարիմ մարդիկ:
Ինքներդ կարդացե՛ք «Համաձայն քաղա-
քացիական որենսդրության 3-րդ կետի
412-րդ հատվածի, յենթակա չի վեր-
գրման»...

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱԾ.— Բավական է:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Կարդացեք, մա՛րդ աստծո՛ւ:
ԴԱՏ. ԿԱՏԱՐԱԾ.— Յերեք քաջ և հեռու իմ,

ձանրից, ե՛յ դու:

ԱՆՆԱ.— (Փակում է ականջները) Վողոր-
մա՛ծ աստված, հեռու սլահիր մեզ փոր
ձանրից:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Մոտենում է դատ, կատարա-
ծույին, դիրքը բարձր բռնած) Այստեղ
դրվա՞ծ ե՛:

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱԾ.— Բանալի՛ն:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Մեծ ուժով և հալածով).
Որե՛նքը վրտնահարել չեք կարող: Բա-
նալին չեք ստանա:

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱԾ.— (Հանում է ատրճառնա
կը). ղնա՛նք:

(Ծեր դյուղացին ակնդես նայում է
դիմված մարդուն, հանդիստ դառնում
է, մոտենում է սեղանին, վերցնում է
ծխամորճը և դիտարկը, դիտում է իր
լնակարանը և հաստատուն քայլերով ա-
ռաջ է անցնում, նրան հետևում է դատ,
կատարածուն: Յերե յերկուսով դուրս
են դնում, դռան յետև լսվում է աղ-
մուկ, բացականչութուններ, կրահոց,
վտրին հեռում է ևս յերկու կրակոց:

ԱՆՆԱ.— (Սենյակից դուրս վազելով) Քրիս-
տիա՛ն: (Լռութուն: Մի ակնթարթից

յերևում է Աննան, վորը բերում է Բը-
րիստիանին դեպի սեղանը և մոտեցնելով
նստեցնում է աթոռի վրա):

ԱՆՆԱ.— Դու վիրավորվա՞ծ ես... (Շոշա-
վում է նրան, հանում է վրայից բաճ-
կոնը: Քրիստիանը, ասես քարացած վի-
ճակում, շարունակում է նստած մնալ:
Մի ձեռքում դեռևս բռնել է դատ. կա-
տարածույի ձեռից խլած ատրճառնա-
կը, իսկ մյուս ձեռքում՝ դիրքը: Աննան
վազում է դուրս միջանցքից լսվում է
նրա ձայնը՝ «Քրիստիան, այս ի՞նչ ես
արել: Ի՞նչ ես արել, Քրիստիան»):

ԱՆՆԱ.— (Կրկին ներս դալով) Ի՞նչ ես արել
Քրիստիան: (ցնցում է նրան). Նա մե-
ռած է, Քրիստիան: Լսո՞ւմ ես, մե-
ռած է:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Հոգնած, հանդիստ). Ջուր
առը ինձ, Աննա՛:

Աննա ջուր է տալիս:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Խմում է) Լավ: Նստի՛ր,
նստե՛ք:

Աննան հնազանդ նստում է: Քրիս-
տիան արտասովոր կենտրոնացած է:
Նա վաղաքում է կնոջ ձեռքը, վո-
րի հետ ապրել է իր կյանքը: Յեր-
կուսով էլ նստած են լուռ Բաղից

լավում են հրամաններ, խիստ ձայնեք:

ՁԱՅՆ.— Տուն չմտնել և տնից դուրս չգալ:

ԱՆՆԱ.— Քրիստիան, դրոշայինները:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Տուր ինձ իմ տոնական հա-

դուստը:

ԱՆՆԱ.— Նրանք ասում են, վրք դուրս չե-

գնաս, նրանք վախենում են քեզանից:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Տուր ինձ իմ տոնական հա-

դուստը:

Աննան բերում է տոնական սև հա-

դուստը: Քրիստիան մեքենայորեն

փոխում է հագուստը: Նա հաղնում

է ոսլայած շապիկը, սև ժիլետը,

կապում է փողկապը: Աննան ոգ-

նում է նրան: Քաջագործության և

հայրենիքին մատուցած ծառայու-

թյան համար ստացած յերկաթյա

խաչի շքանշանը դարձրած և ծեք

դյուղացու կուրծքը:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Վոչ վոք չկա... վոչ վոք

չկա, վոքսեղի ոգնի... (Լուսամու-

տից դուրս նայելով): Ժողովուրդը հա-

վաքվում է...

ԱՆՆԱ.— (Վախեցած) Հեռու, նրանք կկրո-

կեն...

ՔՐԻՍՏԻԱՆ.— Կանգնել են... Գյուղացի-

ները... Իսկ նրանց առաջ՝ դրոշային-

ները... Իսկ այստեղ կանգնած է դու-

ղացի Բեռցը:

Յերեկոյան ժամերգության զանգա-

հարություն...

ՁԱՅՆ.— Գյուղացի Բեռց, դուրս յեկեք...

Դուրս յեկեք անհապաղ...

Ձեռքերը վեր...

Քրիստիանը մոտենում է Աննային,

փաղաքում է նրա դեմքը:

ԱՆՆԱ.— Քրիստիան, ինչո՞ւ այդպե՞ս

ՁԱՅՆ.— (Ավելի մոտիկից) Դո՛ւրս յեկեք...

Ձեռքերը վեր...

Քրիստիանը ձեռքերը վեր բարձ-

րացրած, դուրս է գնում: Յերեկո-

յան ժամերգության տխուր զանգա-

հարություն:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Գյուղական փողոց: Գյուղացիները կանգ-

նած են քարե ցածրեկ պատի մոտ: Սկզբում

խոռում են կամացուկ, ապա ավելի ու ա-

վելի զրգոված:

ՇՏՐՈՐԵԼ.— Այո, յերբորդ որն է Քրիս-

տիանը նստած ե... Յերրորդ օրը:
ԼԵՆԵ.— Յե՛վ Վոչ Վոք մի կարգին չդիտե,
ինչ ե պատահել:

ԿՈՏՅ.— Ասում են սպանության համար:

ԼԵՆԵ.— Իսկ յեթե Ռիզդեբի նման շունը,
մարդասպանը դա և ահա այսպես (ցույց
ե տալիս) դենքը գեմ անի թե՛ վերջին
ունեցածը տուր...

ԿՈՏՅ.— Ինձ մոտ, համենայն դեպս, չեն
դա:

ԼԵՆԵ.— Իհա՛րկե:

ԿՈՏՅ.— Ասում են, նա նստած ե մահա-
պարտների խցում, դռան մեջ ահա այս-
պիսի անցք կա միայն: Կործանել են
ուղում Գրիստիանին:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Բայց չե՞ք վոր մենք դեռ այս-
տեղ ենք... Ձե՞ք վոր մենք կարող ենք
դնալ և աղատել մարդուն:

ԿՈՏՅ.— (Զարմացած). Ի՞նչեր ես ասում:

ՇՏՐՈՒՅԵԼ.— (Կոտցին). Հապա դու ի՞նչ ես
ասում:

ՍՈՖԻԱ.— (Վախեցած). Դու մի խառն-
վիր... Այդ տեսակ դործերի համար դե-
տե՞ս ինչ կանեն... Այժմ կացինով են
գլուխը կտրում:

(Հանքը յերևում ե պարսպի յետև
և ավանջ ե՛ր դնում):

ԿՈՏՅ.— (Շարոբելին). Ուրեմն դու... (չի
վերջացնում). Վո՛չ, այդ տեսակ դոր-
ծերում յես չկամ:

ԼԵՆԵ.— Վոր այդպես ե, կորիւր այստեղից,
վախկոտ նապաստակ:

ԿՈՏՅ.— Ձեռդ կորի, անառա՛կ: Դուք ինչ
ե, ուղում եք դրոհայիններ զե՞մ կրո-
վել, վոստիկանության, ժանդարմերիա-
յի: (Շարոբելին). Դու ժխտո՞ւմ ես,
վոր Քրիստիանը կրակել ե հարկահալա-
քի վրա: (Մյուլլերֆրեյին). Դու աղա-
տե՞լ ես ուղում Քրիստիանին:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՅ.— Ազատել Գրիստիանին,
անե՛ծք աստծուն... Մի խումբ ամուր
տղերք վերցնել, ջա՛րդ եւ փշո՛ւր անել
այդ դռներն իրենց անցքերով... Իսկ
յեթե դուք, հարգելի հտաբաղություն,
թուլամորթ եք, ապա ծերուկ Մյուլլեր-
ֆրեյը ցույց կտա ձեզ, ինչպես պետք ե
վարվել:

ԼԵՆԵ.— Մի՛շտ քեզ հետ եմ, Մյուլլերֆրեյ:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Յե՛վ մեղանից ամեն-մեկը, ում
մեջ դեռես դյուղացու արյուն կա, կա-
րող ենք հիշեցնել նրանց, վոր մենք
նույնպես կրակել դիտենք:

Հանքը պարսպից ներս ե ցատկում:

ՀԱՆՍ.— Ինչո՞վ ես պատրաստվում երակել,
արեխո՞վդ:

ՇՏՐՈՐԵՆԼ.— Հա՛նս:

ՀԱՆՍ.— Ահա ինչ, բարեկամներս... Այո...
Թող մի յերեք հոգի, մի հինգ հոգի
ևս այդպես, հորս նման... Վո՛չ, այդ-
պես վոչինչ դուրս չի դա...

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Յե՛վ այդ ասում ես
դո՞ւ: Վախենո՞ւմ ես հարազատ հորդ
դռնել:

ՀԱՆՍ.— (Համառ). Մենք պետք է ուրիշ
ճանապարհ բռնենք:

ԿՈՏՑ.— (Արագ). Կարելի չե դիմում դրել
դատավորին:

ՍՈՓԻԱ.— Այո, այո... Գյուղապետն ե՛լ,
տերտերն ե՛լ կատորադրեն:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Այդ դիմումը, ձեր դա-
տավորը... (շարժում): Ահադանդ պետք
է հնչեցնել, լեռներում խաբույկներ
պետք է վառել, ժողովրդին պետք է
վոտքի հանել և բանտերի վրա հար-
ձակվել:

ՇՏՐՈՐԵՆԼ.— Այո, այդպես պետք է անել:

ՀԱՆՍ.— Յե՛վ ճիշտ է, և՛ ճիշտ չէ:

ՇՏՐՈՐԵՆԼ.— Դու հորդ ուղղում ես բանտում
ժողովո՞ւմ:

ԿՈՏՑ.— Ավելի լավ է բողոք ներկայարկել

մայրաքաղաք... Այնտեղ արդարամիտ
մարդիկ են նստած: Նրանք չգիտեն ինչ
է կատարվում այստեղ...

ՇՏՐՈՐԵՆԼ.— Զգիտե՛ն...

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Գուցե խորհուրդ կտաք
դերադույն դատարան դիմել, դիմել
«նորին դերազանցությանը»...

ՀԱՆՍ.— (Նրան նայելով). Թերևս և «նո-
րին» դերազանցությանը... (դադար).
Միայն պետք է ուրիշ ձևով դիմել, բո-
լոր դյուղացիներին, ամբողջ շրջանի
ստորագրություններով... Հաղարավոր
ստորագրություններ:

ՇՏՐՈՐԵՆԼ.— Բոլորե՛ք: Բոլորը չեն ստորագ-
րի:

ՀԱՆՍ.— Բոլորը, ովքեր մեզ հետ են...
Կովսենք, որինակի համար, այսպես՝
«Մենք, այսինչ-այսինչ դյուղերի դյու-
ղացիներս դեռևս լավ չենք հասկանում
դործի ելությունը: Մենք դատապար-
տում ենք Քրիստիան Բեստի արարքը...
Նրա արարքը սխալ է»:

ԿՈՏՑ.— Ճի՛շտ է:

ՀԱՆՍ.— «... Բայց մենք վախենում ենք,
վոր մեզանից յուրաքանչյուրը կարող է
կրկնել Քրիստիան Բեստի քայլը: Մենք
խոնարհաբար խնդրում ենք Գերագույն

դատարանին, բացատրել մեզ՝ Առաջնորդը
խոստացավ դուռը պիտու թան դրությունը
թեթեացնել, բայց տեղական իշխանու-
թյունները չարունակում են հարկեր
վերցնել... պետական, կալվածատիրոջ,
այլև յեկեղեցական, մի խոսքով հարկա-
դրված ենք տալ ամբողջ բերքը մինչեւ
վերջին ծեղը... Մենք խնդրում ենք
Գերագույն դատարանին բացատրել մեզ,
ինչ է նշանակում այս բոլորը»:

ԿՈՏՅ.— Բայց դա վոչ թե խնդիր է, այլ
ադիտացիա:

ՀԱՆՍ.— Դա ադիտացիա չէ: Մենք միայն
ներսնց կհիշեցնենք Առաջնորդի խոստու-
մը: Սա փորձ է հասկանալու...

ԿՈՏՅ.— Ե՛, վոչ, այդպիսի նպատակով յես
դատարանի հետ... ընդհանրապես վեճի
չեմ բռնվի:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Գրիր, Հանս, յես ստորագրում
եմ:

ՍՈՖԻԱ.— Դու չես ստորագրի... Դու կին
աւ յերեխաներ ունես: Գո ինչ բանն է
այդպիսի գործերի մեջ խանդելը...

(Շտրոբելը հրում է կնոջը: Մոտե-
նում է Աննան):

ՀԱՆՍ.— Մեր տուն յեկող յեղե՞լ է, մայր:

ԱՆՆԱ.— Վոչ-վոք... վոչ մեկը... վոչ մի

տող... վոչ մի խոսք (դադար) Նրան
արդեն...

ԱՆՆ.— Դադարիր, Աննա:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Ով դիտե վաղը իսկապես ինչ
կարող է պատահել Գրիստիան Բեռցին:
Այժմ ամեն ինչ այնպես արագ է կա-
տարվում, նույնիսկ սուսնց դատարա-
նի...

ԱՆՆԱ.— Յերեկ յես չորրորդ անգամ յեղա
դատավորի մոտ... ինձ խուզարկեցին,
գուլպաներս չուռ տվեցին... Այնտեղ
չորս կողմը կանգնած են այն սև հա-
զածները... Յես մի բան եյի ցանկա-
նում միայն,— դոնե մեկ անգամ լսեյի
ներա ձայնը, Գրիստիանի ձայնը... Իսկ
ներսնք կանգնել են լուռ... Նրանցից
մեկն ասաց՝ «Այժմ նա այստեղ է,
բայց չուտով կզնա հեռու»... Դա ի՞նչ
է նշանակում, մարդիկ... Այդ ո՞ւր է
նա դնալու «հեռու»... Գուցե... (քա-
րանում է սոսկալի մտքից):

ՄՅՈՒԼԼԵՐՏՐԻՑ.— Անե՛ծք: Հարկավոր է
փրկել մարդուն:

ՀԱՆՍ.— (Գրկելով մորը) Մենք պատրաստ
վում ենք դիմում գրելու, մայր:

ԼԵՆԵ.— Կբերեք դատավորին, Աննա՛, ավե-
լի բարձր կզնանք:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Այո, ուղղակի դատավորին:

ՍՈՖԻԱ.— Այդ ո՞ւր ես գնում... (ամուր
բռնում ե ամուսնուն):

ԱՆՆԱ.— Իսկ ինչպե՞ս պետք ե տեսնեք դա-
տավորին: Այնտեղ չորս կողմը կանդ-
նած են այդ... (լռում ե): «Առաջիմ նա
այստեղ ե, բայց շուտով կգնա հեռու»
...Տե՛ր աստված: Յես վախենում եմ
այնտեղ գնալ:

ԼԵՆԵ.— Ձպետք ե վախենալ:

ԿՈՏՅ.— Դու փո՞րձ ունես, ի՞նչ ե, դատ-
վե՞լ ես:

ԼԵՆԵ.— Այո: Մայիսի մեկին: Դու այն ժա-
մանակ սոցիալ-դեմոկրատ եյիր:

ԿՈՏՅ.— (Դունատվում ե). Սո՛ւս:

ՄՅՈՒԼԼԵՐՅՈՒՅ.— Մենք դեմում կներկա-
յացնենք:

ԿՈՏՅ.— Յես չեմ մասնակցում: Ով ի՞ր
կյանքից զոհվել ե, թող նա յեւ ներկա-
յացնի:

Մտեսնում ե դուռը:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Շատ լավ ե: Վողջ հասա
բաղկութունը այստեղ ե: (Հանում ե
կոչնազիրը): Ահա դատարանի կոչնա-
զիրը: (Նայում ե ընտրվին): Կանչվում
են՝ Սեպտ Շտրոբելը ե ի՞ր կի՞նը... Կանչ
վում ե Լենե Մյուլլերը, Կանչվում ե

Մյուլլերֆրեյցը, 65 տարեկան,— նույն-
պես ե Հանս Բետցը ե Ավգուստ Կոտ-
ցը:

ԿՈՏՅԸ.— (Վախեցած) Յես դատարան եմ
կանչվում, պարոն դուռը:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Դուք սպանության վայրին
մոտիկ եք գտնվել:

ԿՈՏՅ.— Բայց մի՞թե յես գիտեյի, վո՞ր նա
սպանելու յե նրան:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Մեասին արել եք, մեասին
եւ կկախվեք... Հը՞: Հա՛հա՛... Միայն
ճշմարտությունը վկայեցեք, վոչ մի բան
չի կարելի թաղցնել: Հետո կտեսնենք...

ԿՈՏՅ.— Պարոն դուռը, մի՞թե յես
վորեկ հանցանք եմ գործել: Յես ի՞նչ
ընդհանուր գործ ունեմ այդ Բետցի
հետ, այդ անիժյալ խեղազարի հետ...

ՍՈՖԻԱ.— Պարոն դուռը, դատարան
հարկավոր չե տանել մեզ... Իմ Սեպտը
վոչ մի հանցանք չունի: Մենք վոչինչ
չենք արել... Մենք հեռու եյինք, պա-
րոն դուռը:

ԻՅՈՒՂԱՊԵՏ.— Դատարան կանչվելու մա-
սին հայտարարած ե ձեզ: Չհպատակ-
վելու դեպքում ձեզ կտանեն դռահային
ջոկատի միջոցով... Հասկանալի՞ յո:

Յես ի՞նչ կարող եմ անել (ուզում ե
զնալ) :

ԿՈՏՑ.— (Հասնելով նրան). Պարոն գյուղա-
պետ, յես յերբեք դատարանում չեմ
յեղէլ... Յես աղնիվ դերմանացի յեմ...
(կամացուկ). Պարոն գյուղապետ, մի
բոսկե, ահա սրանք... (զգուշորեն ցույց
տալով) Հանս Բետցը, Շարորելը և այն
ծերունիը վորոշել են դիմում տալ, բայց
դա դիմում չէ, այլ ազիտացիա յե...
կոմունիստական ազիտացիա...

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Այդ բոլորը դուք կասեք
դատավորին: Հասկանալի՞ յե: (Գնում
է) :

ԿՈՏՑ.— (Հանսին) Այս բոլորը քո պատ-
ճառով ե... (գյուղապետի յետևից) Պա-
րոն գյուղապետ, պարոն գյուղապետ...
(վազում ե նրա յետևից) :

ԱՆՆԱ.— (Սարսափահար) Յէ՞ս ել արտի
դատարան գնամ :

ՍՈՖԻԱ.— Յես ի՞նչ եմ արել :

ՀԱՆՍ.— (Հանդիստ) Այժմ մենք բոլորս
պարտավոր ենք գնալ :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— Այժմ մենք բոլորս կը-
գնանք :

ԶՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բանտի բակը: Յերկու անշարժ կերպա-
րանք՝ դրոհային շոկատից :

ԳՐՈՀԱՅԻՆ.— (Բաց անելով դուռը). Համ-
մերքբայիցի Բրիտտան Բետցի դործի վը
կաներ Մյուլլերֆրեյց... Սեպոլ Շարո-
րել... Սոֆիա Շարորել, Լենե Մյուլ-
լեր... Ավգուստ Կոտց (գյուղացիները
մեկ-մեկ ներս են մտնում) :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— (Մոտենալով Լենեյին և
Շարորելին). Հարկավոր ե իմանալ, յե՞րբ
են Բրիտտանին բերելու հարցաքննու-
թյան... կամ հարցաքննությունից տա-
նելու... Յե՛լ այն ժամանակ... (հա-
կացնում ե, վոր հարկավոր ե լուռ մը
նալ) :

ԿՈՏՑ.— Դե ինչո՞ւ բանտը քար ու քանդ
չես անում, ծերունի :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— Սմեն բան իր ժամանա-
կին: (Լենեյին կամացուկ) Հասկացա՞ր:
Լենե.— Լավ, ծերունի: Ահա Աննան :

Գալիս ե Աննան, Հանսի հետ :

ՀԱՆՍ.— (Զեռքին կոշնազիր). Մյուս շա-
բաթ ծախելու յեն վերջին ունեցածը :

ՄՅՈՒԼԼԵՐՅՐԻՑ.— (Կարդում ե կոշնազիր).
Մի՞թե դեռ սա քիչ ե նրանց :

ԱՆՆԱ.— Այստեղ ո՞ւմ պետք է խնդրել,
Յեւ քաղաքում յեղա բոլորի մոտ: Դա
տալորին կաղաչեմ... քննիչին...
Լենն.— Սո՛ւս, Աննա՛:

ԱՆՆԱ.— Թող լսեն... Թող բոլորը լսեն...
Այո... Ձե՞ր վոր նրանք չեն լսում...
(Ժամերորեն ընկնում է քարե նստարանի
վրա)՝

Գալիս է ավագ դրոշայինը:
ԳՐՈՂԱՅԻՆ.— Ո՞վ է այստեղ Աննա Բեա-
յը, Գրիստիան Բեայցի կինը:

ԱՆՆԱ.— Յեւ եմ:

ԳՐՈՂԱՅԻՆ.— Քննիչի մոտ:
Աննան և դրոշայինը գնում են
Լուսթյուն: Գյուղացիները լուս-
նստած են: Գալիս է գյուղապետը,
Վոդյուններ: Լուսթյուն:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Այստեղ լավ յեղանակ է:

ՇՏՐՈՒՅԵԼ.— Լավ յեղանակ է:
Լուսթյուն:

ԳՐՈՂԱՅԻՆ.— (Դռնից դուրս է նայում).
Գյուղապետն այստեղ է:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— (Տեղից ցատկելով). ձիւս
այդպես, ձերդ աղնվություն:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Քննչի առանձնատեղակը: Հիտլերի
ահագին նկարը:

Քննիչը, Աննա Բեայցը և դրոշայինը:
ՔՆՆԻԶ.— (Սարսափ ազդող լուսթյամբ ջրկ-
ջըկում է թղթերը). Դո՞ւք եք Աննա
Բեայցը:

ԱՆՆԱ.— Յեւ եմ, ձերդ աղնվություն:

ՔՆՆԻԶ.— Դուք գիտե՞ք ինչ է պատահում,
յերբ ճիշտ ցուցմունք չեն տալիս:

Աննան լուս է:

ՔՆՆԻԶ.— Յեվ այդպես, նա ի՞նքը հարձակ-
վեց դատական կատարածուի վրա:

ԱՆՆԱ.— Ինչի՞ մասին եք հարցնում, պա-
րոն դատավոր:

ՔՆՆԻԶ.— Յեւ հարցնում եմ, ինչպե՞ս և
յե՞րբ հարձակվեց ձեր ամուսինը դատա-
կան կատարածուի վրա, զենքը ձեռ-
քին...

ԱՆՆԱ.— Ի՞նչ զենք, պարոն դատավոր: Նա
միայն ձեռքին բռնեկ եր «Գյուղացի
ինչպես պետք է իրեն պաշտպանի» դեր-
քը: Յերեկ գիտե՞ք... Այդ գիրքը բաժա-
նեցին դյուղում, յերբ (նայում է նկա-
րին) առաջնորդը...

ՔՆՆԻԶ.— (Անարդ ընդհատելով). Դա դրոշ-

ձին չի վերաբերում: Դատական կատարածուն սպանված ե յերկու գնդակով: Ուրեմն Բեաքը զբըն՝վ ե կրակել: Բարեհաճեցեք, վերջապես, ումեն բան պատմել կարգին:

ԱՆՆԱ.— Ինչպե՛ս ե պատահել դա... Յես սենյակումն եյի, պարոն դատավոր... իսկ դա պատահել ե նախասենյակում... Նրանք դուրս յեկան նախասենյակէջ... Յես այն տեսա, վոր ամուսինս ներս մտալ, իսկ նա ընկած եր մեռած:

ՔՆՆԻԶ.— (Նշան անելով դրոհայինին). Բա՛վակա՛ն ե:

ԳՐԻՆՍՏԻՆ.— (Աննային առաջնորդում ե դէպի դուռը). Այս կողմը:

ԱՆՆԱ.— Նրան ի՞նչ կանեն, պարոն դատավոր:

ՔՆՆԻԶ.— Դա դուք կիմանաք դատարանում. (Աննային դուրս են տանում): Քրիստիան Բեաքին:

Դուան յետե կրկնում են «Քրիստիան Բեաքին»: Ներս են բերում Քրիստիան Բեաքին:

ՔՆՆԻԶ.— Դո՛ւք եք Քրիստիան Բեաքը, Համմերսբախ գլուղից: Դատի ե հետաքննության տակ յեղե՞ք եք:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Դա՛տի ե հետաքննությա՞ն:

Յերբեք: Արդար մարդը վախենալու վժ՝ չինչ չունի: Զեղ, ձերդ ազնվություն, յես սիրով կասեմ ամեն ինչ,— բոլորը, ինչ մտածել եմ յես այս քանի որը:

ՔՆՆԻԶ.— Կրկին անգամ խորհուրդ եմ տալիս չիղծել: Դուք զենք ունեյի՞ք:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Վկա յե աստված, յես դիմա՝ վորեցի նրան զիրքը ձեռքիս: (Տեսնելով զիրքը, վորն ընկած ե սեղանի վրա, վորպես իրային արարցույց): Միայն զիրքը:

ՔՆՆԻԶ.— (Դեն հրելով զիրքը) Վորտե՞ղ եք թաղցրել դուք ձեր զենքը:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Զե՞ք վոր ասում եմ ձեզ, պարոն դատավոր, ձեռքիս զիրք եր, միայն զիրք:

ՔՆՆԻԶ.— Դուք սպասո՞ւմ եյիք ձեր սպանած սկտաւան պաշտոնյային:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Իմ վորդին ե հարեաններն առաջին, վոր նա զալիս ե:

ՔՆՆԻԶ.— Այդպես: Յե՞րբ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Մի քանի բոպե նրա զալուց առաջ:

ՔՆՆԻԶ.— Ի՞նչ ասաց ձեր վորդին: Ի՞նչ առաջին ձեր հարեանները:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Մոռացել եմ:

ՔՆՆԻԶ.— Ուրեմն դուք սպանում եյիք դե՞

տական կատարածուն: Դուք պատրաստ
վեցիք նրան դիմավորելու: Ընդհատ եմ ա-
սում:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Թեքեա...

ՔՆՆԻԶ.— (Խիստ). Այդպես: Դուք կատարել
եք կանխամտածված սպանութիւն...

ՔՐԻՍՏԻԱՆ.— Կանխամտածված: Վկա յե
աստված, վոր յես միայն գրքով, որեն-
քով, միայն որենքով դիմավորեցի նը-
րան... Ահա այսպես յես, այսպես՝ նա...
գիրքը ձեռքիս յես ընդառաջ եյի գնում
նրան, յերբ նա ասորճանակն ուղղեց
ինձ... Հիսուն տարի ասորում եմ աշ-
խարհում, և հանկարծ իմ տան մեջ
հարձակում են ինձ վրա: Որենքն ինձ
խրավունք ե տալիս պաշտպանելու: Յես
գիտեմ որենքը:

ՔՆՆԻԶ.— Դուք չգիտեք որենքը:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Յես գիտեմ որենքը, ձեռք
ազնւութիւն: Դուք նույնպես պիտի ի-
մանաք... Սա միթե որենք չե (աբազ
թերթում ե գիրքը) «Համաձայն Քաղա-
քացիական Որենսդրութեան 3-րդ կետի
412 հարտվածի, յենթակա չեն վերգրման
ինվէնտարը և անասունները»... Միթե
սա որենք չե:

ՔՆՆԻԶ.— Բեւոյ, ձեզ հանդիստ պահեցեք:

(Խելով գիրքը): Յեթե դուք գտնում եք,
վոր պետական պաշտոնյայի գործողու-
թիւնը վտանահարել ե ձեր իրավունք-
ները, դուք կարող եյիք դրավոր բողոք
ներկայացնել:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Յես չորս տարի յեղել եմ ուս-
տերազմում: Յես չըանշան ունեմ: Յես
իմ արյունը դոհել եմ հայրենիքիս, յես
քվե յեմ տվել առաջնորդին... Ձի կո-
րեի հաշմանդամից խել վերջին ունե-
ցածը: Այդ մասին ասված ե որենքում...
Որենքը՝ որենք ե...

ՔՆՆԻԶ.— Որենքը՝ որենք ե:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Պարոն դատավոր, յես պետք ե
աղատ լինեմ: Պարոն դատավոր: Դուք
չեք կարող ինձ պահել այստեղ: Յես աշ-
խատել եմ և յեթե յես պարտք եմ մնա-
ցել, ապա յես շարունակ հաշիվ եմ ա-
նում, Թե ինչպես վճարեմ իմ պարտքը:
Յես ահա այսպես եմ մտածել...

ՔՆՆԻԶ.— Ձեզ մեղադրում են կանխամտած-
ված սպանութեան մեջ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Դա սուտ ե, պարոն դատա-
վոր, սուտ ե: Գյուղացուն զբաղւորում
են, գյուղացուն խաբուսեմ են, պարոն դա-
տավոր:

ՔՆՆԻԶ.— (Ցատկում ե տեղից). Լռեցե՛ք:

Այլապես յես ձեզ կարգապահական պատ-
ժի կենթարկեմ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Թեկուզ հազա՛ր պատիժ: Ո-
րենքը պետք է մնա որենք (հուզված
ցատկում է տեղից):

ՔՆՆԻԶ.— Նստեցե՛ք... Դուք ձեր տանը չեք,
այլ հարցաճննության: Հաճեցե՛ք պա-
տասխանել հարցերին: Ո՞վ է զրդեւ ձեզ
սպանության:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Վոչ վոք...

ՔՆՆԻԶ.— (Վեր է կենում և մոտ դնում).
Խոհեմ յեղեք, ծերուկ: Դուք բալական
կթեթեւացե՛ք ձեր վիճակը, յեթե խոս-
տովանեք, վոր ուրիշի ազդեցության
տակ եք դառնալ: Հասկանո՞ւմ եք: Յեւ
դուք ուղղակի անզոր ելիք հալառակ
դնալու ձեզ զբողոքներին: Յեւ աղպես,
ասացեք, Բեռց, ո՞վ է զրդեւ ձեզ իշ-
խանության ներկայացուցչին սպանելու:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Վոչ վոք, պարոն դատավոր:
Յես արդեն առացի, վոր վոչ վոք: Յես
միայն իմ իրավունքն ելի պաշտպանում,
ինչպես ասված է որենքում:

ՔՆՆԻԶ.— Աղպես: Այդ դեպքում ինքս էս-
տե՛մ ճշմարտությունը: Դուք, չզիտես
ինչու, ձեզ վրա յեք վերցնու ուրիշի
հանցանքը, այն ինչ ինքներդ գործել եք

կոմունիստական տեղորոշումների ցուց-
մունքով:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Տեղորոշումներ: Այդպիսինե-
րին յես չեմ ճանաչում: Վորդուս յես
տանից դուրս արեցի, նույնպես և Շտրո-
բելին, Լենեյին, բոլորին դուրս արեցի:
Յես խաղաղություն ելի ուզում... Հան-
գիստ... հասկանում եք, յես հողնած
մարդ եմ, յես յեղել եմ պատերազմում:

ՔՆՆԻԶ.— Յես նույնպես յեղել եմ պատե-
րազմում, յես նույնպես հողնած մարդ
եմ, յես նույնպես հարյուրավոր զրգ-
բախտություններ ունեմ— Է՛ ձեր, Է՛
իմ դժբախտությունները: Վո՞ր դատա-
վորն ողնության կհասնի ինձ: Ասացեք,
ծերուկ, ո՞վքեր են կանգնած ձեր թի-
կունքում: Ո՞վ է ձեզ մղել սպանու-
թյան:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ո՞վ է ինձ մղե՞լ:

ՔՆՆԻԶ.— (Լարված). Այո՛:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ո՞վ է ինձ մղել, պարոն դա-
տավոր... Ինչպես ասեմ ձեզ... կյանքս
անցել է... վոչինչ չի մնացել անցյա-
լում... վոչինչ չկա չորս կողմը: Այո,
յեթե ճշմարտան ասելու լինեմ, ինձ մղել
է իշխանությունը: Հողս առել են սրարտ
քի տեղ և այժմ ինքս նույն այդ հողի

Համար Հարկ-Հարկի յետեւից եմ վճարում... Խաղողի վաղերը Հարկադրում են արմատախիլ անել... այժմ ել վերջին ինվենտարը... Իսկ ինչո՞վ պիտի աշխատեմ, ինչպե՞ս պիտի աշխատեմ:

ՔՆՆԻԶ.— Առանց քաղաքական ճառի:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ի՞նչ եք ասում: Քաղաքակա նությունն իմ բանը չե... ճառեր յես միայն լսում եմ... Յես ձեզ բացատրում եմ միայն մեր դրությունը... դրուղացու դրությունը... Դուք ի՞նչ կարծիք ունեք այդ մասին: Ինչո՞ւ յե այսպես լինում:

ՔՆՆԻԶ.— Դուք չեք, կարող ինձ հարցեր տալ: Որե՞նքը...

ՔՐԻՍՏԻԱՆ.— Որե՞նք չկա՛յ այլևս:

ՔՆՆԻԶ.— Տարե՛ք սրան:

Բեռցին դուրս են տանում:

Մտնում ե գյուղապետը:

ՔՆՆԻԶ.— Ա՛, այդ դուք եք: Առաջեք, իսկապես ասած, ի՞նչ ե տեղի ունենում ձեր գյուղերում:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Վորոշ հուզմունք... ինչպես, որինակ, վատ յեղանակից առաջ վոսկորներն սկսում են ցավել:

ՔՆՆԻԶ.— Վասկորների ցավը պետք է բժշկել:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ճիշտ այդպես: Այս քանի որը հարեան գյուղում հարկադրված ենք յեղել կրակ բաց անել— 5 հոգի ծանր վերավոր, 18 ձերբակալված:

ՔՆՆԻԶ.— Լսել եմ:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Համարձակվում եմ զեկուցել— շուտով քվեյարկություն ե լինելու: Առաջնորդի հաջորդության համար, համարձակվում եմ զեկուցել,— խոչընդոտ ե— Բետցի սլատճառով գյուղացիների հուզմունքն այնքան ել ժամանակին չե:

ՔՆՆԻԶ.— Ճիշտ դետողություն ե: Բայց այդ Բետցի կայքը վաճառել հարկաւ վոր ե:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Գուցե թույլ կտաք առայժմ հետաձգել, իսկ քվեյարկությունից հետո ամեն ինչ կարվի:

ՔՆՆԻԶ.— Իսկ պարտքերն ո՞վ կմուծի: Իսկ ո՞վ սկստսխիսն կտա: Ո՛ր, դրողը տանի, վերջ ի վերջո խելադարվել կարելի յե այս շելափլավից:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— (Ուղադրությունը լարելով և փորձող). «Շելափլավից»...

ՔՆՆԻԶ.— (Վախեցած). Յես... յես չիլափլավ անվանեցի հանցադործներին, չափերտավոր քննադատներին... Դուրս

կտամ, վոր Բետցի Հանցադործությանը մասնակից են կոմունիստները: (Նայում ե գլուղապետին):

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— (Նսւնդսկս վախեցած) Ճիշտ այդպես: (Դադար) Թեպետ Բետցը մեր քաղաքական հայացքների կողմնակից ե: Նա առաջնորդի կողմն ե:

ՔՆՆԻԶ.— (Լուում ե, ինչ վոր բան կշռա-
դատելով). Իսկ ասացեք, Բետցը ձեզ
մի բանով դարձանք չի՞ր պատճառում:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Վոչ... Խաղաղ մարդ ե...
Ճշմարիտ ե, վերջին ժամանակ այն-
քան ել չեք տիրապետում իրեն:

ՔՆՆԻԶ.— Այդպես, այդպես...

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ճիշտ այդպես:

ՔՆՆԻԶ.— (Նշան անելով) Մոտ յեկեք,
գլուղապետ: Լսեցե՛ք, այս ասածներին
մեջ ե թաղնված դործի վոզջ լուծու-
մը: Այլի մոտ (գլուղապետը մոտե-
նում ե): Այդ Բետցը հոգեկան հիվան-
դության նշաններ ունի, նա սկսում ե
խելագարվել, հը:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— (Մի առ ժամանակ լուռ ե,
ըմբռնելով). Ճիշտ այդպես, պարոն
խորհրդական:

ՔՆՆԻԶ.— Այդպես... միանգամայն ակնհայտ
ե, վոր Բետցը մտամոլ ե: Նա տառա-

պում ե հետապնդման մտամոլությամբ:
Նրան շարունակ թվում ե, վոր դիտա-
վորյալ կերպով իրեն ուղում են վնասել:

Քննիչը գրում ե, գլուղապետը մտա-
հոգիւմ համաձայնության նշաններ ե
անում:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ուրտի տեղական իշխանու-
թյունը սպանության համար պատրառ-
խանաւորություն չի՞ր կրում... Ճշմա-
րիտ ե:

ՔՆՆԻԶ.— (Ձանգահարում ե, ներս յեկած
գրոհայինին) Բետցի՛ն: — Ճշմարիտն ա-
սած, յես հարցաքննության ժամանակ
նկատեցի, վոր նա մի տեսակ հանկար-
ծակի գրգռվում ե:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ճիշտ այդպես: Յես նույն-
պես նկատել եմ:

Ներս են բերում Բետցին:

ՔՆՆԻԶ.— (Ցույց տալով գլուղապետին).
Բետց, դուք ճանաչո՞ւմ եք այս մար-
դուն:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Այն ել ինչպե՛ս:

ՔՆՆԻԶ.— Լա՞վ ես զգում քեզ, Քրիստիան՝

ՔՐԻՍՏԻԱՆ.— Վոչինչ... Այժմ յես շատ
ժամանակ ունեմ զանազան զգվելի գոր-
ծերի մասին միտք անելու:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— (Քննիչին) Նկատո՞ւմ եք:

(Բեառցին): Ինչո՞ւ յես այդպէս անհանգիստ, բարեկամս:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Յես սրկաների բարեկամը յեմ:

ՔՆՆԻԶ.— (Գլուղապետին). Ահա՛:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Յուլյա տալով դուղապետին). Նա ինձ խոստացաւ ժամանակ տալ, ոգնել, ասում եր, վոր այժմ գլուղացու ապրուստը կթեթեանա, բայց հետո հենց ինչն ել կտաւարչի հետ յեկաւ... Նրան ի՞նչ, նա քսան դաստիկն հող ունի: Լափում ե ուղածի չափ:

ՔՆՆԻԶ.— Բե՛տց, հանդուստցե՛ք:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Լա՛ր, չա՛ր, դուղապետ: Այժմ իմ գլուխը պայծառացել ե: Այժմ յես գետեմ ինչն ինչպէս ե և դու ինչ պտուղ ես:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— (Քննիչին). Դուք լսո՞ւմ եք, այժմ նրա գլուխը «պայծառացել ե»:

ՔՆՆԻԶ.— Կատարյալ շփոթութիւն ե տիրում նրա ուղեղում:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Կարգը պահանջում ե, վոր պեսզի յես հանձնեմ նրա կայքը կրկնաճուրդի հանելու հայտարարութիւնը, Գուցե նա վորեւե ասելիք ունի, կամ փող կդննի վճարելու:

ՔՆՆԻԶ.— Հանձնեցե՛ք:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Բե՛տց, իմ պաշտօնը պա՛րտադրում ե ինձ կրկնաճուրդ նշանակել քո կայքին: (Հանձնում ե հայտարարութիւնը): Գուցե դու փող ունես:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Նրա դեմքին ե նետում ճոճթած հայտարարութիւնը): Շո՛ւն: (Հուսահատ և կատաղի նետում ե աչն մարդկանց վրա, վորոնք այդպէս կեղծ են: Գրոհալինները ծեծում են ծեբու. նուն և քարշ տալիս դուրս):

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— (Դուրս գնալով) Հայլ Հիտլե՛ր...

Դուան յետե՛ ծեծվող հին զինվորի, դուղացու հուռչանքները և աղաղակները:

ՅՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՎԵՅԵՐՈՐԴ ՊՏԿԵՐ

Հողբուժական հիվանդանոցում:

Հողբուժական հիվանդանոցում բըժիշկը նայում ե Բեառցի վերաբերյալ ուղարկած փաստաթղթերը:

Ներս են բերում Բեառցին, հիվանդանոցային հաղուստով:

ԲԺԻՇԿ.— Ա՛... Նստեցե՛ք, քեռի Բե՛տց,

Նախ մի փոքրիկ ձևականություն:
(Կարգում և հիմնականոցային թերթի-
կը)։ Քրիստիան Բեռն: Հիսուն տարե-
կան: Համաեւրոպայի գլուղացի. Դատի և
հետաքննության տակ չի յեղել: Ժիւլո
է:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Վոչ:

ԲԺԻՇԿ.— (Սերալիւր). Յեւ աղպես, քեռի
Բեռն, յեկեք փոքր ինչ խոսենք ձեր
գործի մասին և ծանոթեանք ձեր ա-
ռողջական դրութեան հետ: Նայեցեք
այս փոքրիկ մուրճին (յուշյ և տալիս
հիմնադրին լաւու փոքրիկ մուրճը, հե-
տեւելով նրա բերեքի արտահայտու-
թեանը). Դուք այդ շատ լաւ եք ա-
նում, շատ լաւ: Հապտ նայեցեք կողքի,
վերեւ, ներքեւ... Ինչ հիմնալի յենք
անում մենք այդ (թելադրում և առիտ-
տենտին) «Բիբերը, աջ և ձախ հա-
մաչափ են»... (Քրիստիանին): Այդպես,
հապտ արարեցեք ձեր ձեռքը, մատները
չարժեցեք, ազատ... Հիմնայի՛ր յե:

ԲԺԻՇԿ.— Բա՛նաւ ընդհանուր գննութեան և
յենթարկում Բեռնին:

ԲԺԻՇԿ.— (Իսկելով Բեռնի ուսին). Քեռի
Բե՛ռն, դուք շատ լաւ եք պահպանել:
Այդպես, յեկեք այժմ ստուգենք, թե

ինչ և մնացել ձեր գլխում պարտքական
պարտաճանձներէր: Գուցէ դուք յեն-
թարգում եք, վոր յես դեռ վորեւե րան
հիշում եմ: Արեւելին... Յեւ աղ-
պես, վեց անգամ ութ, կլինի...

ՔՐԻՍՏԻԱՆ. Քառասուն ութ:

ԲԺԻՇԿ.— Շատ լաւ, իսկ հարցուր ութը
բաժանած 12-ի:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ինչ:

ԲԺԻՇԿ.— Սքանչելի: Ինչպես և կոչում
ճրանակայի մայրաքաղաքը:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Փարիզ... Մենք քիչ մնաց
համեմէյեք Փարիզին:

ԲԺԻՇԿ.— Հոյակապ է: Իսկ Հոլլանդիայի
մայրաքաղաքը:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Հոլանդիայի՞

ԲԺԻՇԿ.— Այո, վորտեղից ստացվում և ա-
մենաընտիր պանիրը:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Մեկ նմաներին յերեք չի
հանում այդ պանիրը:

ԲԺԻՇԿ.— Վատ պատասխան չէ, նոյնիսկ
սրամիտ: Ինչ տարբերություն կա դե-
տի և լճակի մեջ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Գեաղ հոսում է, լճակը կանդ
նոճ է:

ԲԺԻՇԿ.— Հիմնալի յե: Իսկ ինչ տարբերու-
թյուն կա գնելու և գողանալու մեջ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Փոքր ինչ լուռ մնալով) .

ստորեկրթյունը ախճան եւ մեծ չե :

ՔՓԻՇԿ.— Շփոթում եք, Բեռն : Գնելու ժա-
մանակ մարդ տեղեկանում ե պնի մա-
սին, իսկ զսղանալիս վաչ վոք դինը չի
հարցնում :

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ինձանկից վաչ վոք դինը չը-
հարցրեց, յերբ իմ հոգը խնցելի :

ՔՓԻՇԿ.— (Աստանախն) Գրեցեք : Հիման-
դի մասովոր ընդունակությունները ե
դպրոցական պարտադանքները ստուգե-
լու ժամանակ առանձին թերություններ
չհայտարարվեցին... Մակայն նկատելի
յե սոցիալական հասկացողությունների
բացակայությունը :

ԱՍԻՍՏԵՆՏ.— (Գրելով) «Սոցիալական հա-
կացողություններ»...

ՔՓԻՇԿ.— «Ակնհայտ են հոգեկան հիման-
դության նշանները» : Բոլորը (Բեռնին) :
Նշանակում ե, սխեմի Բեռն, ձեզ թվում
ե, վոր ձեզ հետ անխրախտ յեն վար-
վել :

ՔՐԻՍՏԻԱՆ.— Պարոն Բժիշկ, հապա որեն-
քում ինչու յե ստիած՝ «Յենթակա չե
վերադարձն գյուղացու տնտեսության
համար անհրաժեշտ ինֆենտարը ե անա-
սունները» : Յեղ ինչու մեզ խոստա-

ցան... Ե՛հ, ալթմ ամեն ինչ միեւնոյն
ե :

ՔՓԻՇԿ.— (Աստանախն) . Գրեցեք ալլ լա-
ուայի : Չափազանց ընտրոչ ե որենքն
ալլպես ճշտությամբ իմանալը : Տիպիկ
դասամոլության ձե : Ալլպես, թանկա-
դին Բեռն, բոլորը ձեզ հետ վարվել են
անխրախտի :

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Բորբոքված) . Մե՞թե սա
կարգ ե, վոր ստույգ մարդսն փակում
են ինչպարանցում :

ՔՓԻՇԿ.— Ինչու յեք բղավում :

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Հուսահատ) , Իմ իրավունքն
եմ պահանջում յես, այն ինչ խոստա-
ցել են ինձ : Ուրիշ վոչինչ : Իմ իրա-
վունքը ե իմ ազատությունը : (Թու-
լացած) . Ե՛հ, դուք բոլորդ պաշտպա-
նում եք մեկը մյուսին, վոչինչ չի փոխ
վել (ե նստում ե լուռ) :

ՔՓԻՇԿ.— Ձեզ թվում ե, վոր ձեզ հետա-
պնդում են :

ՔՐԻՍՏԻԱՆ.— Վոչ, չեն հետապնդում, ալլ
խտրում են : Ձե՞ վոր որենքը պաշտպա-
նում ե ինձ :

ՔՓԻՇԿ.— Նշանակում ե, դուք իրավայի՞
յեք վարվել, սպանելով դատական կա-
տարածույին :

ԲՐԻՍՏԻԱՆ.— Յեա կարծում էյի նա մեղա-
վոր ե...վոր, աղբակն չե... աղբակն
չե:

ԲԺԻՇԿ.— Ահա թե ինչ:

ԲՐԻՍՏԻԱՆ.— Այո, յես համարվեցի աղ-
բանում, յես խնդրում եմ դատել ինձ:
Յեա դատարանում...

ԲԺԻՇԿ.— Դուք խնդրում եք, վորպեսզի
ձեզ դատե՞ն: (Ասխտեանովն) Նա ծած-
կում ե իր ճիւղանդուխտնը, նա ձե-
վացնում ե, վոր սուղջ ե: Հետաքրքիր
դեպք ե:

Ներսե ե դալեա դրոհայինը, նրա
հետ գյուղականը ե մի այլ դատական
կատարածու:

ԳՐԻՆՆԱՅԻՆ.— (Բժշկին, տանձին). Համ-
մեքտախում անհանդիստ ե, ամբար
չախաղանց հուզված գրութան մեջ ե...
Քվեյարկութան համար դա վտանգավոր
ե: Լավ կլինի բեացին ցույց տալ նը-
րանց: Նրանք պահանջում են աղ,
դուք պետք ե հաջողեցնեք այդ:

ԲԺԻՇԿ.— (Պատրաստակամութեամբ). Յեա
հասկանում եմ: Յեա կուշիատեմ: (Գը-
րոհայինը դուրս ե գնում: Բժիշկը
դառնում ե բեացին). Յեվ աղպես,

Բե'աց, Նշանակում ե դուք ձեզ լավ եք
զգում... Դուք հանդիստ եք:

ԲՐԻՍՏԻԱՆ.— Այո:

ԲԺԻՇԿ.— Համաձայն եք մի վորքը դրո-
տանք կատարել:

ԲՐԻՍՏԻԱՆ.— Յեա չէյի մերժի... Բայց...

ԲԺԻՇԿ.— Ի՞նչ լայց: Դուք ուզում եք ա-
սել, վոր հիվանդ եք:

ԲՐԻՍՏԻԱՆ.— Վոչ...

ԲԺԻՇԿ.— Այդ դեպքում բան ինչո՞ւմն ե:

ԲՐԻՍՏԻԱՆ.— Յեա պահանջում եմ, վոր
ինձ դատեն:

ԲԺԻՇԿ.— (Սերալիբ). Բայց, Բե'աց, դա-
տում են միայն սուղջ մարդկանց:

ԲՐԻՍՏԻԱՆ.— Այդ դեպքում դատեցեք ինձ:

ԲԺԻՇԿ.— Նշանակում ե, դուք հիվանդ
չե՞ք:

ԲՐԻՍՏԻԱՆ.— Ո՛ր, աստված իմ... Յեա կը-
հիվանդանամ այստեղ... Դուք մտա-
ծում եք կենդանի-կենդանի թաղե՞լ ինձ
այստեղ: Յեա ուզում եմ, վորպեսզի
դատարանում ամեն բան պարզվի... Յեա
ուզում եմ....

ԲԺԻՇԿ.— (Ծանոթում ե նրան ասխտեանով
հետ) Մի բոսկ, Բե'աց, առ անհրաժեշտ
ե: (Ծանոթում ե, չափից ձեռքին) Այո-

պես: (Ասիտանալը բռնում է Բեադին)

Մի բոպե... (Բժիշկը սրկում է):

Բժիշկ.— Այսպես... նստեցեք...

Բեադը ստորձանաբար ընկնում է
անտարբեր վիճակի մեջ:

Բժիշկ.— Դուք չե՞ք պատժվի:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (Հլու) «Ձեմ պատժվի»:

Բժիշկ.— Բե՛ադ, իսկույն մենք կգնանք քո
բարեկամներին մոտ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— «Բարեկամներին մոտ»:

Բժիշկ.— Դուք դեռևս կատարելապես ա-
ռողջ չե՞ք, Բեադ: Յես ձեզ հետ կլի-
նես:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Այո այո, «Ձեզ հետ կլի-
նես»:

Բժիշկ.— (Ասիտանալին). Այժմ նա հան-
դեսաւ և հնազանդ կլինի: Այդ դեղը
լավ է ներգործում... Իսկույն կգրեմ
(բժիշկը նստում է գրելու, գրելու ըն-
թացում հարցնում է ասիտանալին)...
Ինչպե՞ս է:

ԱՍԻՍՏԵՆՏ.— Յերեխայի նման հանդեսաւ և:
(Մաքրում է Բեադի բերանից թափվող
թուփը):

Բժիշկ.— Սակայն հարկավոր է հետեւել,
այդ գրությունը չե՞մք մնա խաբուսիկ է
լինում, նա առողջ մարդ է: Թերեւս այդ

դոդան նրա համար քիչ է: Դե՛, դնա-
ցինք, Բե՛ադ: Դուք լսում ե՞ք: Բե՛ադ,
դուք կատեք միայն «Հանդեսաւ, բարե-
կամներս, հանգիստ, ամեն ինչ լավ է»:
Կրկնեցեք: Կրկնեցե՛ք:

Բեադին դուրս են տանում հիվան-
դանոցից, նա քայլում է կրկնելով՝
«Հանդեսաւ, բարեկամներս, հանգիստ,
ամեն ինչ լավ է»... Գրոհայինը նայում
է բժիշկին, յերկուսով ժպտում են:

ԳՐՈՀԱՅԻՆ.— Ամեն ինչ լավ կլինի:

ՅՈԹԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Դյուլքում: Փողոցով անցնում է
մունետիկը, հայտարարելով՝ «Համա-
ձայն վերգրման հրամանի, ուժուրդով
ծախվում է Համահրաբախ դյուլքացի
Քրիստիան Բեադին պատկանած կաշ-
քը»... Մունետիկը կրկնում է, անց-
նելով փողոցով: Աննան դուրս է բե-
րում վերջին իրերը: Բեադի տունը
դատարկվել է և վորբացել: Մի խումբ
լուռ կանգնած դյուլքացիներ:

ՀԱՆՍ.— (Ներս դալով) Դուք չե՞ք հավա-
րում, ինչ ասում է՞ք յես: Դուք ա-
սում ե՞ք, վոր Բեադին կարող են դա-

տել և կարող են արդարացնել... Բայց
ահա կարգաչեք այս... Սա ձեր «Պյու-
զական լրարեք» թերթն է.

ՇՏՐՈՒՆԵԼ.— (Վերցնում է լրարդիբը) «Կան-
խապես մտածված սղանդության մեջ մե-
ղադրվող Համաեւրոպացի Բրիտան
Բեազը անդադրված է հոգեբուժական
հիվանդանոցում, վորովհետեւ պարզվել է
վոր նա տառապում է հոգեկան հիվան-
դությամբ»:

ՋԱՅՆ.— Գուցե դա ուրիշի մասին է: **ՉԼ՞**
վոր Բրիտանը առողջ է:

ՄՅՈՒԼԼԵՐՖՐԻՑ.— Նա յերկատասարդ ժա-
մանակ չստիպանց ուժեղ եր, հետո յեւ
ծառայել է գլխադիւրյում, իսկ գլխա-
դիւրյում ընդունում են ամենից առողջ-
ներին:

ՄԻ ԱՅԼ ՋԱՅՆ.— Նա միշտ այնպես հան-
գիստ ու հեղանդ եր:

ԼԵՆԵ.— (Կարդում է). «Տառապում են հոգե-
կան հիվանդությամբ...» Սակայն յեթե
նա միայն ինկաղաքների մեջ, իսկուպես կա
բող է ցնորվել:

ՋԱՅՆ.— Պետք է բողոքել... Ո՞րք է գլխու-
պետը:

ԱՆՆԱ.— (Վերջին իրերը ձեռքին). Սուս կա
ցեք, մի աղաղակեք, Բե չե նրանք թե՛

Բրիտանին այն վիճակին կհասնեն,
վոր նա այլևս չի վերադառնա:

ԼԵՆԵ.— Ընդհակառակը, Աննա՛, հարկա-
վոր է, վորպեսզի այդ մասին բոլորը խո-
սեն:

ԱՆՆԱ.— Սուս կաց, Բրիտանին իմն է:
Դո՛ւ չես, վոր պետք է հոգ տանես նրա
մասին... Թող նրանք վերցնեն ամեն
ինչ, մինչև վերջին միւրը, միայն թե
ազատեն Բրիտանին: Միայն թե ինձ
ստան նրան:

ԼԵՆԵ.— Աննա՛, ուշքի յեկ:

ԱՆՆԱ.— Ռւշքի յեկեք դուք: **ՉԼ՞** վոր յես
որ ու զիշեր միայն է միայն նրա մասին
եմ մտածում... Ո՛ր, մարդիկ, տվեք,
վերադարձրե՛ք ինձ իմ Բրիտանին (նա
ծուռկի յե իջնում հարեանեւերի առաջ):

ԼԵՆԵ.— (Բարձրացնելով նրան). Աննա,
Աննա, աշպատ մենք վոչինչ ստանալ
չենք կարող:

ԱՆՆԱ.— Այդ դեպքում, բարի մարդիկ, ի՞նչ
անեմ... (Շարքերը բռնեց և Թափո-
հարում: Աննան դառնում է նրան):
Միայն թե իշխանությանը հակառակ մի
խոսեք... Բրիտանին չեք սիրում դա:

ՋԱՅՆ.— Պետք է խնդրել գլխադիւրին,
վորպեսզի ողորկ:

ՄԻ ԱՅԼ ԶԱՅՆ.— Խնդրել գլուղապետին:
Մարդիկ լուրձ են: Զախեր՝ «գլու-
ղապետը դալիս են»: Դալիս և գլուղա-
պետը, դրահալիքի հետ:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ինչո՞ւ յեր աշտպես վաղ
հալաբալել:

ԶԱՆՍ.— Մե՞թե մենք մեր տան մեջ աղատ
չենք:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Յես խոսում եմ գլուղապե-
տին հետ և վուչ թե ոտսը մարդկանց:
Յես չեմ կարծում, վուր քաղաքից յեկած
քեզ նման տուրխտները կարիք ունենան
գլուղական դանազան ինվենտար գնելու:

ԶԱՅՆ.— Ո՞ւր և Քրիստիանը:

ՄԻ ԱՅԼ ԶԱՅՆ.— Վերադարձնել Բեադին:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Այդ ո՞վ և աղաղակում:
Ո՞վ և անհանգստացնում աշն մասին, ին-
չի մասին յես պիտի անհանգստանում:
«Վերադարձնել Բեադին»: Ի՞նչ է, յես
այդ մասին չե՞մ մտածել: Հապա ինչո՞ւ
յեմ յես գլուղապետ նշանակված: Գեու-
նա յերեկ յես միջնորդել եմ և Բեադին
աղատել: Նա իսկույն կգա աշտեղ:

Զաբաղապետ քաղաքապետություններ:
Աննայի վախեցած ուրախ բացականչու-
թյունը, նա նետվում է դեպի գլուղա-
պետը, շնորհակալություն հայտնելու:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ծառ ախլորդ և ոտսը
մարդիկ են թրե դալիս աշտեղ, ամեն
տեսակ պոռոտախոտներով... Դուք կար-
ծում եք գլուղապետ կարիքն իրո՞ք մոտ
և նրանց սրտին: (Սպանալի ցույց տա-
լով Հանսին և Լենեյին): Նրանք ժխտյն
աղբում են մեր հաշվին... Միայն քվե-
յեն հալաբում: Իսկ մեր կյանքն աշա-
տեղ և անցնում և աշտեղ և մեր հա-
վատը: Յե՛վ մեղանից ամեն մեկը հարե-
վան թ իր հարեանին և հալատարիմ
դեղմանացի յե:

Գալիս և Քրիստիանը: Բացականչու-
թյուններ: Նրա հետ են բժիշկը և ա-
խտները:

Բեադը անտարբեր անցնում է և նրա-
տում նստարանի վրա:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ահա քեռի Բեադը: Տեա-
նում եք նրան: Ահա նա վերադարձավ
մեզ մոտ: Բեադը փորձանքի մեջ է ըն-
կել, մի բան կանենք, իսկ առաջմ հա-
կոխոր է վճարել: Աղբիվ՝ մարդը մեկտ
վճարում է, ճշմարիտ է, Քրիստիան:

ՔՐԻՍՏԻԱՆ.— «Հանգիստ, բարեկամներս
հանգիստ»...

ՄԻ ԿԻՆ.— Ո՞ր, նա սարսափելի աչքեր ու-
նի:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Սկսեցի՛ք, պարոն գառա-
կան կատարածու:

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱՅ.— Համաձայն վերջրձան հը
բամանի, աճուրդով վաճառվում է
Քրիստիան Բեադին պատկանած կայքը:
Առաջին իրը՝ դորձածած բրին: Գինը
մեկ և կես մարկ: Ո՞վ է առաջինը:

Լուսթյուն: Հախաբաճաներին ցույց
են տալին Քրիստիան Բեադի խցուսի ի-
րերը: Կոտցը ցւադիր գննում է բրինը:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Այսպես ալեկը ● լավ է...
ի՞նչ կարիք կա շտապելու... նախ հար-
կալսը է գննել իրերը:

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱՅ.— Մեկ և կես մարկ... Յեք
կու...

ՀԱՆԱ.— (Առաջ անցնելով) Մի՞թե չեք լի-
տում... վաճառվում է Քրիստիան Բեադի
իրերը... Հիանալի միջոց է աժան գը-
նով ձեռք բերելու... Դե, մի վախեցեք
Գնողին վաչխնչ չի պատահի: Այդպես է
սրենքը: Որենքը պաշտպանում է նրանց:
Ձե՞ք վոր Քրիստիան Բեադի խելադար է:

ՇՏՐՈՒԲԵԿ.— Քրի՛ստիան:

Աղմուկ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— «Հանդիսա՛ւ բարեկամներս,
Հանդիսա՛ւ, ումեն ինչ լավ է»:

ԼԵՆԵ.— Բեադ, այդ ի՞նչ էս ասում:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Թող Բեադը խոսի... Խո-
սիք, բարեկամ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Բարեկամ՞...

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱՅ.— Խնդրում եմ չխանդա-
րել: Գործածած բրին: Գործածած յե-
ղան... յեկ վախտյա սրբոց... Մե՛կ...

ՇՏՐՈՒԲԵԿ.— Ձախ չճանեք:

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱՅ.— Մեկ մարկ չխոսն մեկ
պիսնիսդ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— «Հանդիսա՛ւ, բարեկամներս,
Հանդիսա՛ւ»...

ԼԵՆԵ.— Ո՞վ է վերցնում: Դե դուք յեկ,
դուք յեկ, փորձիր... Ո՞վ գին նշանա-
կեց:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ուղում էս տեսե՞լ ո՞վ է
վերցնողը: Յես եմ վերցնում:

ՄՈՒԼԼԵՐՅՐԻՅ.— (Կանգնելով նրա տուջ)
Ալեկի լավ է՝ թող, գլուղադեա:

ՔՐԻՍՏԻԱՆ.— «Հանդիսա՛ւ, բարեկամներս,
Հանդիսա՛ւ»... Սա ի՞նչ է...

Քրիստիանը տեղից կխարարձանում է,
տառապանքով նայում է չբաղադարին:
Դեմքին արտացոլում են դիտակցության
զալու նշաններ:

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱՄ. Յերբորդ անգամ, ո՞վ է
վերցնում:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (տեսնելով իր իրերը, վերց-
նում է բրիչը) Այո, այո... Յես գիտեմ
... Յես պետք է աշխատեմ... (տեսնե-
լով գյուղատկերին) պարոն գյուղապետ,
այդ յես եմ, Քրիստիանը:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ի՞նչ ես անում, բարեկամս
(ձեռքը դնում է նրա ուսին, կանգնելով
կողքին, ուշադիր լսելով խոսքը):

ՔՐԻՍՏԻԱՆ.— Այո... Հանդիսում... Հանդիսում...
Ինչո՞ւ յեք հուշվում: Ի՞մ սխառնաստի,
ինչո՞ւ:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ճամարիտ է: Ա՛յ, սա խիստ
կան զերմանացի յե: Յեղեք ստուսրբուն:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Ինչո՞ւ յեք հուշվում իմ սխառ-
նաստի... մեկ ամիս, կես տարի հետո
հերթը համանելու յե ձեզ՝ բոլորիդ:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Դե, դե... Ի՞նչ ես աշատեղ-
... (դատական կատարածույին) Շուտ ա-
րեք:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Սպասիր... (ինչ վրա արտա-
հայտելով լուսնիկը (խորհելով))... Նրանք
ինձ հետ ինչ վրա բան են արել:

ԼԵՆԵ.— Ի՞նչ, Քրիստիան:

Գյուղապետը դեն է հրում Լենեյին:

ԴԱՏ. ԿԱՏԱՐԱՄ.— (գյուղապետին) Ի՞մ Լա-

մանալը սահմանադրակ է: Մեկ մարկ հի-
սուն մեկ պֆենինգ... Յե՛րեք:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Սպասեցեք. (նստելով դա-
տական կատարածուին) Ա՛, դուք նո՞ւյն
պես դատական կատարածու յեք... Յերկ
բարդ դատական կատարածուն:

Ծեք դյուղացին բռնած աշխատանքից
փախչող բրիչի սուր ծայրը, առաջանում
է դեպի դատական կատարածուն: Մի
կին վախեցած բացահանում է:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Զորւյ՛, նա խելագար է:
(Վաճառք յետ են քաշվում):

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Նա խելագար չէ: Այո
ի՞նչ էք անում մարդկանց:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ինձ մո՛տ:

Սուլոցներ:

ԼԵՆԵ.— Սրեկա յե նա, ով այս աղբատ
մարդաց նույնիսկ մի կտրած տաշեղ
կիւրցնի: (Դառնում է գյուղապետին,
զրոհալինին և դատական կատարածուին)
Զերբակալեցեք ինձ, բռնեցեք, ի՞նչ էք
նստում, ձերբակալեցեք մեզ բոլորիս,
այլապես մենք ձեզ կձերբակալենք:

ՀԱՆՍ.— Գյուղացինե՛ր, ողնեցեք:

ԳՐՈՀԱՅԻՆ.— (Յետ մղելով Հանսին և նրա
ընկերներին) Յե՛տ: (Գյուղացիներին վո-
մանց) բռնեցեք այս խելագարին:

Յեղիու-յիւրեք մարդ զդույշ մտանում
են Բեաղին: Նա նկատում է աւ տարա-
յը,—դրանք ելին, վոր նրան չարչարել
են ու տանջել... Նա խելում է զգոհա-
յինի զեմքին, զրոհայինն ընկնում է:
ՔՐԻՍՏԻԱՆ.— Լսեցեք, յես ձեզ կտաամեմ
ամեն ինչ...

ԱՆՆԱ.— (Հեծկտանքով) Բախտան է, նա
խեղապես ցնորվել է: Բարե մարդիկ...
վեբցրէք ամեն ինչ, վեբցրէք ամբողջը
ամանեղներ, սուներ, ամենք, ամենք,
միայն թե բաց թողեք Քրիստիանին:
ՔՐԻՍՏԻԱՆ.— Փախէք նրա բերանը, յես ոլ-
տի խոսեմ...

Գյուղատարը ուղում է ճիւղել:
ԼՆՆ.— (Գյուղատեարին). Մղատի՛ր, ո՛ւր:
Դու յես ժողովրդին հալաքել աճուրդի:
Չե՞ վոր դու շարունակ կըլնում եյիք,
վոր ժողովրդի ձայնը—դա ինքը արդա-
րությունն է:

Ձանդերի հեռավոր, հուզմած ձայն:

ՁԱՅՆ.— Հարեան դուղացիներն այս կողմ
են վաղում:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Թող աճուրդը կայանա, թող
այելի շատ ժողովուրդ հալաքիլ, վոր
պեղի ամեն մարդ տեսի, թե սրանք
(ցույց տալով զրոհայինին և գյուղատե-

արին) ինչպե՛ս են վարվում գյուղացիներ-
ըի հետ:

ԱՆՆԱ.— Թողեք ինձ: Յես...

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Նա խելաղա՛ր է:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Յե՞ս եմ խելաղարը: Յես յե-
ղել եմ զերմանացի և այժմ ել դերմա-
նացի դուղացի յեմ, հին զինվոր... Յես
միշտ ստող եմ յեղել: Ինձ զինվոր են
տարել: Ինձ հարկադրել են կռիւլ, ինձ
հարկադրել են աշխատել: Վոչ վոր յեր-
բեք, վոչ մի անգամ իմ կյանքում չի ա-
սել, վոր յես հալանդ եմ: Շարունակ
խիւլ են իմ ուսին և ասել՝ «Լալ աշխա-
տավոր մարդ ես դու»:

Ամբոխի աղմուկ: Վոճանք վրա յեն
զնում բժշկին:

ԲԺԻՇԿ.— Նա դառանցում է:

ՔՐԻՍՏԻԱՆ.— Չա՛յնը: Մարդիկ... ընկեր-
ներ, յես միշտ միայնակ եմ յեղել...
այժմ թողեք ինձ մենակ (նա մի քալ
և անդամ դեպի բաղմությունը):

ԲԺԻՇԿ.— Փախեք, նա կկծի բոլորիդ:

Քրիստիանը հարձակում է գյուղա-
պետի վրա: Բացականություններ,
խառնաշփոթություն: Գյուղատեարը ա-
ղատվում է նրա ձեռքից և վաղում դե-

պի դուռը: Տաղնապալից զանգահարու-
թյուն: Ազգանշաններ:

ՁԱՅՆ.— Գրոհայինն' բը:

Լավում է յերգի ձայն:

ԼԵՆԵ.— Մեզ ողնության են դալիս:

Հարեան դյուղի դյուղացիները յերգե-
լով առաջանում են, վրա հասած դրո-
հային ջոկատը փակում է նրանց ա-
ռաջը: Համադարկ:

ՔՐԻՍՏԻԱՆ.— (տառադանքով). Մինչև յե՞րբ
պիտի տանջե՞ք մեզ:

Յերկրորդ համադարկ: Յե՛վ ծեր
դյուղացին, փետեբենը և իսկական դեր-
մանացին դեռին է տապալվում, ինչ-
պես արմատահան յեղած կաղնի: Լուռ-
թյուն: Գնդակից փչրված լուսամու-
տում՝ գրոհայինների թիվունքում, յե-
րեվում է դյուղապետը:

ԳՅՈՒՂԱՊԵՏ.— Ո՛ւր է այդ խելադարը:
Ո՛ւր է Քրիստիան Բեայը:

ՇՏՐՈՐԵԼ.— Յե՛ս եմ Քրիստիան Բեայը:

ՍՅՈՒՂԵՐՖՐԻՑ.— (չոքած իր ընկերոջ դիա-
կի առաջ), (Յե՛ս եմ Քրիստիան Բեայը:

ՀԱՆՍ.— Յե՛ս եմ Քրիստիան Բեայը:

ԼԵՆԵ.— Յե՛ս եմ Քրիստիան Բեայը:

ՁԱՅՆԵՐ.— Յե՛վ ախտե՛ղ... Նայի՛ր... Յե՛ս
եմ Քրիստիան Բեայը, յե՛ս: Գյուղացի-

ներն առաջանում են, կատաղած բացա-
կանելով՝ Յե՛ս եմ, յե՛ս»։— Նրանք ա-
ռաջանում են վոբոլես վրիժառության,
զայրույթի և ճշմարտության մարմնա-
յրով:

ՎԵՐՁ





ՀՀ Ազգային գրադարան



NL0170640

250

ԳԻՆԸ 1 Ո.

ՓՐ. ՎՕԼՖ

Трагедия крестьянина

Гиз ССР Армении, Еревань, 1936 г.